№ 40 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 5 **1897** ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 5 № 40

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆը պատիւ ունի յայտնելու, որ ապրիլի 7-ին, ս. Աւետեաց տօնի օրը, կատարվելու է դպրոցի բարերար

ԱՒԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆՑԻ

հոգեհանգիստը ս. Նշան եկեղեցում: 1—1

Երկուշաբթի, ապրիլի 7-ին

ԱՐՏԵՄ ԵՎ ԳՐԱՖՕՎԻՉ ՔԱՐՏԱՇԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը, Զգրաչէնի եկեղեցում, որ գտնվում է Միջին-փողոցում, պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ: Հոգեհանգստի սկիզբը ուղիղ առաւօտեան ժամի 10½-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի դէպքերի առիթով. Ճշմարտություն և ակցիա. Թաւրիզի վերջին դէպքերը.— — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր պատասխանը. Մատենագրություն. Նամակ Վերին-Ագուլիսից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իմայիլ-Բեամիլ-բէյի գրությունը. Ցունաստան և Կրեատէ. Իտալական պարլամէնտի նիստը. Ցունաց անկախության եօթանասնամեակը. Նամակ Պարսկաստանից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողիօրագիրը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իրաւունք.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մեր յայտնած երկիւղը՝ „Մշակի“ 36-րդ համարում, տարաբաղդաբար, իրականացաւ. մահմեդական ֆանատիկոսությունը, որ մինչև այժմ Թիւրքիայի սահմաններից չէր համարձակվում դուրս գալ, բռնկեց և Պարսկաստանի գլխաւոր քաղաքներից մէկում, Թաւրիզի մէջ, սարսափ տարածելով քաղաքի քրիստոնեայ, գլխաւորապես հայոց կօշնկիայի վրա: Մահմեդական ամբոխի մի այսպիսի բռնկում,—մեզ այդ լաւ յայտնի է,—վաղուց պատրաստվում էր յատուկ էմիսարների և ագենտների ձեռքով, և այդ պատճառով հակաքրիստոնէական ցոյցերի տրամադրությունը այնքան զօրեղացել էր, որ նա պայթեց նոյն իսկ առանց պատճառի: Ըստ սովորականին, ինչպես այդ դէպքերում միշտ, քաղաքի մէջ լուր տարածվեց թէ մի հայ ուզեց անպատուել պարսիկ կնոջ (միշտ կամ կին՝ կամ հաւատ). անմիջապես սէյիդները դիմում արեցին ամբոխի կրօնասիրությունը՝ գեավուրների դէմ, ապա սկսվեց շարժումը, փակվեցին խանութները, կողոպտվեցին անպաշտպանների տները, նրանք, որոնք կարողացան, ապաստան գտան հիւպատոսարաններում, և քաղաքը ստացաւ պատերազմական կերպարանք...

Ով գիտէ, եթէ Նասրէդդին Շահի աջ ձեռքը, այժմ պաշտօնակ եղած սադրազամը, պետական գործերի գլխին լինէր, գուցէ այդ խառնակությունները տեղի չունենային, որովհետև այդ հեռատես պետական մարդը մեծ եռանդով ոչնչացնում էր հարևան երկրից եկող թիւրք էմիսարների և քարոզիչների հակահայկական գաղտնի պրոպագանդան, ձգտելով Իրանի պետությունը ազատ պահել այն մեծ աբատից, որին ենթարկվեց հարևան մահմեդական պետությունը՝ ամենքին յայտնի դէպքերի պատճառով: Սակայն, չը նայած թէհրանի այժմեան խառն վիճակին, այնու ամենայնիւ, պէտք է կարծել, որ Մուզաֆէրէդդին Շահը, որ դեռ նորերս պաշտօնական ընդունելության ժամանակ յայտարարեց թէհրանի հայոց առաջնորդական փոխանորդին, թէ ինքն իր առանձին պաշտպանության տակ է առնում հայերին, կը շտապի խիստ կարգադրություններով թոյլ չը տալ, որ Թաւրիզի դէպքերը կրկնվեն Ատրպատականի որ և է մասում, վանդել տալով երկրից այն գաղտնի քարոզիչներին, որոնք այժմ ամեն կողմ միայն մի նպատակի են ձգտում՝ զրդռել մահմէտականների ֆանատիկոսությունը...

Հաւասարակշռություն պահպանել երկրի մահմետական և քրիստոնեայ ազգաբնակության յարաբերությունների մէջ, ինչպես այդ լինում էր վերջին երեք տարվայ ընթացքում, հէնց այն ժամանակ, երբ Թիւրքիայում տեղի էին ունենում պատմական յայտնի եղեռնագործությունները,— պատւի խնդիր է պարսից բարձր դիպլոմատիայի համար: Ամբողջ Եւրոպան հիացած էր այն արդար վերաբերմունքից, որ վերջին տարիները թէհրանի կառավարությունը ցոյց տուեց դէպի իր քրիստոնեայ հպատակները, և ամբողջ Պարսկաստանի պատւի համար շատ ցանկալի է, որ նա մինչև վերջ կարողանայ տանել իր այդ օրինակելի քաղաքականությունը:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԹԷ ԱԿՑԻԱ

Ռուսաց մամուլի մի քանի պատկերազարդ օրգանները, որոնք տարեկան հաղորդներով բաժանորդներ ունեն, կազմակերպել են ակցիոնէրական առևտրական ընկերություններ, որպես զի, ինչպես իրանք են յայտարարում, աւելի լաւացնեն և զարգացնեն լրագրական գործը ու նպաստեն ռուս մամուլի բարգաւաճման: Այդ երևույթը, այն է ակցիոնէրական առևտրական ընկերությունների կազմակերպությունը, որ այդ թերթերը յայտարարում են իբրև մամուլի զարգացման նշան, ռուս մամուլի մի քանի լուրջ օրգանները համարում են, ընդհակառակը, իբրև անցանկալի և նոյն իսկ վնասակար, այն պարզ հիման վրա, որ փողի տիրապետությունը մամուլի մէջ կարող է միայն անբարոյականացնել այդ մամուլը, խաղալիք շինել նրան այս և այն կապիտալիստի ձեռքում և վերջ ի վերջոյ բարոյական անկման հասցնել:

Առանձին ապացոյցների կարիք չը կայ այդ կարծիքը հաստատելու համար: Աւետարանի հիմնադիրը արտասանեց այն յաւիտենական ճշմարտությունը, թէ չէ կարելի ծառայել երկու տէրերի՝ Աստուծուն և մամոնային, այն է ճշմարտություն, արդարություն, իդեալին և փողին: Մամուլը, մանաւանդ նոր քաղաքակրթվող ազգերի մամուլը, կոչված է բարձր դաղափարներ տարածելու, պաշտպանելու ճշմարտությունը, թարմ և կենդանի մտքեր տարածելու: Իսկ այդ միսիան աջողությամբ կատարելու համար, հարկաւոր է, որ մամուլը ամենից առաջ անկախ լինի, ենթարկված չը լինի որ և է անբարոյականացուցիչ տարրի ազդեցությանն և իր գլխաւոր նպատակը լինի ոչ թէ շատ եկամուտ ունենալ, այլ շատ մտքեր տարածել, և օգտակար սերմեր ցանել: Մամուլի և նրա ղեկավարների գործունեությունը պէտք է բարձր լինի շահասիրական նպատակներից, որպէս զի նա կարողանայ բարոյական անջնջելի տպաւորություն թողնել հասարակության վրա: Անկաշառ, անբիծ, իր կոչման բարձրության վրա կանգնած թերթը երբէք չէ կարող ղեկավարվել այն մտքով, թէ ինչ միջոցներ գործ դնի, որ տարվայ վերջին իր ակցիօնէրներին աւելի շատ դիվիդենդ տայ:

Մամուլի ակցիան, որպէս բարոյական միմեանց հակասող, միմեանց թշնամի գաղափարներ են և ակցիայի տիրապետությունը մամուլի մէջ պէտք է համարել ոչ թէ մի ուրախալի, այլ ցաւալի երևոյթ, որի դէմ ամենայն ոյժով պէտք է կռուել: Ակցիայի տիրապետությունը կը տայ մամուլին այն անհաստատ և շարունակ փոթորիկներին ենթակայ բնաւորությունը, որ ունեն նոյն իսկ իրանք ակցիոնէրական-առևտրական ընկերությունները: Գրականության և մամուլի զարգացումը պահանջում է՝ ազատ խօսքի իրաւունքի հետ միասին՝ և կատարեալ անկախություն կապիտալից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԱՒՈՒՆՔ

(Պարսկաստանի դերվիշների կեանքից)

I

Կէս օր էր:

Արեգակի կիզիչ ճառագայթների տակ Թաւրանի բլուրները կարծես բոցավառված էին: Ո՛չ անցորդ և ո՛չ մի կարաւան չէր երևում: Ամենքը ցրվել էին այս ու այն կողմ և սպասում էին եղանակի զովանալուն: Այդ պահուն երկու ճանապարհորդներ արեգակի կիզիչ ճառագայթներից ազատվելու համար ծուվեցին Խորասան տանող ճանապարհից դէպի Գեավուր բերդը *)... Հասնելով բերդի ստորոտում գտնված ջրհորին, նրանք նստեցին ջրհորի ափին և սպասում էին եղանակի զովանալուն, որպէս զի չարունակեն իրանց ճանապարհը:

Ճանապարհորդներից մէկի արտաքին կերպարանքը ցոյց էր տալիս, որ դերվիշ է: Ալեղարդ միրուքը ծածկում էր ծերունի դերվիշի հնկայական կուրծքը: Երկար և գզգված մազերն անկանոն կերպով թափված էին նրա ուսերի վրա: Աչքերը խոշոր ու կրակոտ էին և ծածկված թաւ յոնքերի տակ: Հագուստն ընդհանրապէս հնամաշ և պատառոտված էր: Ցնցոտիների միջից աչքի էին ընկնում նրա բազուկները: Դերվիշի լայն ճակատը խիստ համակրելի կերպարանք էր տալիս նրա արտաքին տեսքին: Ձեռքին բռնած ունէր մի երկաթեայ գաւազան, որի ծայրը սրի նմանություն ունէր և վրան փորագրված էր «իրաւունք» խօսքը...

Դերվիշի ընկերն աւելի երիտասարդ էր և կազմուածքով խիստ առողջ: Աչքերը ներս էին ընկած և արիության ոչ մէկ նշոյլ չէին արտայայտում; կարճ միրուքը և մազերի ծայրերն ու եղունգները խինայած էին: Փոքրիկ, զգուշի նմանություն ունեցող գլուխն ածելած էր ըստ մահմէդական սովորության, իսկ հագուստը ամենաթանգագին կտորներից էր պատրաստած: Նրա հագուստը և շարժողությունը վկայում էին նրա հոգևորական լինելը: Արդարև նա պարսիկ հոգևորական էր և Թուրբեթ քաղաքի Ղազին, մի խիստ մոլեռանդ պարսիկ հոգևորական, որ տարին տասն և երկու անգամ գնում էր Մեշէդ երկրպագելու հռչակաւոր «Իմամ-Ռիզայի» տակունքներին...

Ղազին մէկ դրօշակ ունէր, որի վրա նկարված էր Ալիի աջը...

Դերվիշի համեստությունն հակապատկերն էր ներկայացնում Ղազին: Այդ նկատելի էր նաև նրանից, որ պարսիկ հոգևորականին ուղեկցում էին թւով չորս ծառաներ, որոնք կատարում էին մեծ մարգարէի յաջորդի հրամանները... Ծառաները մէկ կողմ քաշված՝ հանգստանում էին: Իսկ Ղազին և դերվիշը ջրհորի ափին նստած՝ զրուցում էին:

—Աղա դերվիշ, պէտք է աղօթել, չէ՞, հարցրեց Ղազին:

—Կարող էք, պատասխանեց դերվիշը, առանց շարժվելու իր տեղից:

Ղազին ոտնամանները հանեց, թեքերը յետ ծալեց մինչև արմունկները, երեսն ու ոտները լուաց, երեսը դէպի արևմուտք դարձրեց՝ դէպի մուսուլմանների սուրբ աղօթատեղին, ապա ըսկսեց աղօթքի ծիսակատարությունը:

Մինչ Ղազին աղօթում էր՝ դերվիշը ջրհորի ափին գտնված արմատենու ստուերի տակ պառկած՝ հանգստանում էր և երբեմն երբեմն նայում դէպի Ղազիի կողմը... Ահա այդ ժամանակ նրա լայն ճակատի վրա երևան էին գալիս կնճիռներ, որոնք նշան էին դերվիշի ներքին աշխարհի ալեկոծման... Կարծես անապատի հարատև զաւակը խորասուզված լինէր փիլիսոփայական մտածողությունների մէջ:

Ղազին վերջացնելով իր աղօթքը, վերադարձաւ դերվիշի մօտ: Վերջինս իսկոյն բացեց իր հնամաշ ափսոցը և փռեց գետնին: Նրա պաշարեղէնը բաղկացած էր մի քանի չոր «սանգակ» հացի փշրանքներից և մի քանի հատ սոխից...

—Բարեհաճեցէք մօտենալ, ասաց դերվիշը, քաղաքավարությամբ հրաւիրելով Ղազիին՝ իրան սեղանակից լինել:

—Ո՛չ, ես ինձ թոյլ չեմ տայ ձեզ հետ միասին ճաշել:

—Ինչու՞, մեծ զարմանքով հարցրեց դերվիշը:

—Որովհետև դուք չէք աղօթում մեծ մարգարէին. հետևաբար՝ ձեր հացը «հարրամ» է... Միթէ նզովված չի լինի այն ուղղափառը, որ իրան թոյլ կը տայ ձեզ հետ սեղանակից լինելու:

—Միթէ: Ապա ոչ-մուսուլմանները չէն աղօթում, ինչու՞ նրանց ես պիղծ էք համարում...

—Նրանք աղօթում են, այդ ճշմարիտ է, բայց ոչ մեծ մարգարէին. հետևաբար՝ նրանց աղօթքը Ալլահին չէ հասնում և չէ կարող հասնել:

—Բարեկամ, թողէք այդ հարցը մնայ, մօտ եկէք:

—Ո՛վ դերվիշ, ինչու՞ նախ աղօթում և ապա ճաշի չէք նստում: Միթէ դուք գեավուր էք, վրդովված բացականչեց Ղազին և չարունակեց, —վայ իմ հոգուն. միթէ ես մեղաւոր եմ Ալլահի և մեծ Մարգարէի առաջ, որ սրա պէս մեղաւոր—անհաւատ մարդու հանդիպեցի...

—Շուտ տաքանալը, յուզվելը եթէ չասեմ անփորձություն,—անարդարություն նշան է, բարեկամ, ինչու՞ էք բարկանում...

—Ի՞նչպէս չը բարկանամ, երբ սուրբ երկրում, սուրբ հողի վրա անաստուած ընկերի հանդիպեցի: Միթէ սրանից աւելի ցաւալի բան կարող է լինել ինձ համար աշխարհումս...

Դերվիշը լռեց, ոչինչ չը պատասխանեց:

Մինչդեռ ծերունին իր համեստ ճաշն էր վայելում, Ղազին հեռուում նստած՝ բարկությամբ նայում էր դերվիշի կողմը...

—

*) Այս բերդը գտնվում է Իրանի և Նախկին Թուրանի սահմանագլխում: Բնակիչները պարսիկներ են:

ԹԱՒՐԻԶԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

—

Մարտի 20-ին Թաւրիզում տեղի ունեցած ցաւալի դէպքերի և անկարգութիւնների մասին հետեւեալ մանրամասնութիւններն ենք քաղում մի քանի մասնաւոր նամակներից։

Ինչպէս յայտնի է, Թաւրիզում բոլոր քրիստոնեաները—հայերը և եւրոպացիները երկու թաղում են բնակւում՝ Լիլավայի և Ներսի կամ Բերդի թաղում։ Հայերի և եւրոպացիների մեծամասնութիւնը կենտրոնացած է Բերդաթաղում, որտեղ գտնւում են և եւրոպական բոլոր հիւպատոսարանները։ Հայոց և եւրոպական առեւտրական գրասենեակները, դրամատները գտնւում են քաղաքում, Ամիրի քարվանսարայում, որ Բերդաթաղից մօտ մի վերստ հեռու է, իսկ Լիլավայի և Բերդի թաղերի հեռաւորութիւնը հազիւ կէս վերստ լինի։ Զանազանութիւնը այն է, որ Լիլավան բոլորովին բաց է, չէ պաշտպանված, իսկ Բերդաթաղը պաշտպանված է պարիսպներով և դռներով։

Մարտի 20-ին, առաւօտեան, ռուսաց հիւպատոսարանի մի հայ ծառայ, Յովհաննէս անունով, որի տունը Լիլավա է գտնւում, դուրս գալով փողոց, կամենում է «խլվլի» աղցանը գնել։ Այդ աղցանը չատ գործածական է հայերի մէջ մեծ պասին և ծախողները թուրքեր են։ Ծախող թուրքը մի անսովոր գին է պահանջում. հայը չէ տալիս և բարկանում է, ասելով, որ այդ գնով կարելի է մի «չեարաք» դառան միս առնել։ Թուրքը կոպիտ պատասխանում է. հայը հայհոյում է ասելով. «իթիլ, ջհաննէմ օլ» (կորիր, դժոխք գնա)։ Այդ միջոցին փողոցով անցնելիս է լինում Լիլավա թաղի յայտնի մոլեռանդ սէյիդ «փիշնամազի» (աղօթք անող մզկիթում) կինը։ Լսելով հայի խօսքերը, թուրք կինը հայհոյում է հային, ասելով. «ինչպէս ես համարձակվում հայհոյել մուսուլմանին, մուտտա էրմէնի» (սիրած հայ)։ Հայ ծառան պատասխանում է. «Սենդէ իթիլ (դու էլ կորիր), քո ինչ գործն է»։ Կինը իսկոյն գոռում է. «մուսուլմաններ, հայը իմ պատուին դիպաւ, կամեցաւ անպատուել ինձ»։ Այդ աղաղակի վրա թափվում են թուրքերը և յարձակվում Յովհաննէսի տան վրա։ Յովհաննէսը փախչելով, մի կերպ վազում է դուրս ձգում է ռուսաց հիւպատոսարանը, որտեղից մի քանի հոգի կազակներ են ուղարկվում նրա տունը պաշտպանելու համար։ Մինչև կազակների գալը Յովհաննէսի տունը կողոպտվում է։ Միւս հայերը տեսնելով վտանգը, փակում են իրանց տան դռները և որովհետև բոլոր տղամարդիկ բազարումն են լինում, ուստի կանանց մէջ մեծ իրարանցում է ընկնում. այնու ամենայնիւ, նրանք կարողանում են մի կերպ իմաց տալ տղամարդկանց։ Վերջիններս, ինչպէս և եւրոպացիները, փակելով վաճառանոցները, վազում են դէպի տուն. բայց, ճանապարհին, ծանօթ և բարեկամ պարսիկ վաճառականներ խորհուրդ չեն տալիս գնալ Լիլավա, այլ մնալ Բերդաթաղում։ Մինչ այդ, խուժանը ստուարանում է և սէյիդների առաջնորդութեամբ, որոնք քարոզում էին. «մուսուլմաններ, միթէ պէտք է համբերէք, որ քեաֆիրները մեր կանանց անպատուեն», յարձակվում են հայերի տների վրա, բայց այդ միջոցին գօրքը վրա հասնելով, թոյլ չէ տալիս։ Փողոցներում պատահած հայերին ծեծում և խլում են ժամացոյցները ու փողերը։ Այդպէս շարունակվում է առաջին օրը. հայերը փակված իրանց տներում, մի մասը ռուսաց հիւպատոսարանում և առաջնորդարանում, իսկ թուրք ամբոխը՝ պատում փողոցներում և խռնված մզկիթներում։

Երկրորդ օրը, մարտի 21-ին, երբ զրգռումը և յուզմունքները չեն դադարում, ռուսաց հիւպատոս Պետրով իմաց է տալիս դահաժառանգ իշխան Էմիրզաթ-ուլ-Սալթանէին, որ եթէ պարսից զօրքը չէ կարող զսպել խուժանը և պաշտպանել քրիստոնեաներին, ինքն բերել կը տայ Ջուլֆայից ռուս կազակներ, որոնք կը կատարեն այդ պաշտօնը։ Դահաժառանգը խոստանում է և մուռեթիկ պատեցնելով բազարներում՝ սպառնում է «կտրել նրա ձեռքը, ով որ և է հայի կը դիպչի»։ Միայն խուժանը հանդարտացնելու համար, նա խնդրում է հիւպատոսից յանձնել կառավարութեան Յովհաննէս ծառային. հիւպատոսը մերժում է, և այդ աւելի է զրգռում ամբոխին։ Հայերը երկիւղ կրելով, աւելի մեծ խմբերով այդ օրը գնում են ապաստանելու ռուսաց հիւպատոսարանը։ Այդ օրը, Թաւրիզի մուշթայիդը մարդ է ուղարկում հայոց առաջնորդի մօտ, միամտացնելով նրան, որ ոչ մի վատագ չը կայ և թող նա յորդորի հայերին հանդարտվել, իրանց գործերով զբաղվել։

Յուզմունքը թուրքերի մէջ, վախը և սարսափը հայերի մէջ չարունակվում է և մարտի 22, 23 և 24-ին։ Ամենքը սպասում են նոր գեներալ-նահանգապետ Ամիր-Նիզամի գալուն, որ պէտք է մտնէր Թավրիզ 25-ին։

Ինչպէս երևում է, հանգստութիւնը և կարգը վերականգնված է, որովհետև այլ ևս չեն ստացվել Թաւրիզից յուզիչ հեռագիրներ։

Ընդհանուր կարծիք է, որ խուլութիւն սերմանող և զրգռող սէյիդները կաչառված են օսմանեան հիւպատոսից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

—

Ներքև տպագրում ենք պ. Աղայեանցի նամակը անփոփոխ, բառ առ բառ։ Ճշմարիտ է, այդ նամակի մէջ կան մի քանի անտեղի, անհնարութեան վերաբերեալ ակնարկներ, բայց և այնպէս մենք ամբողջապէս տպագրում ենք, որպէս զի պ. Աղայեանց հիմք չունենայ ասելու, որ իրան միջոց չէ տրվում ազատորէն կարծիքներ յայտնելու «Մշակի» էջերում։

Խոստովանում ենք, մի փոքր անյարմար բան է «Մշակի» էջերում գովասանքներ կարդալ և պաշտպանել «Մշակի» խմբագրին, բայց այդ անյարմարութեան ամբողջ մեղքը ընկնում է պ. Աղայեանցի վրա, որ իր նամակի մէջ մի քանի տեղ չեշտում է ոչ միայն պ. Քալանթարի՝ իբրև Հրատարակչական ընկերութեան նախագահի գործունէութիւնը, այլ և մի քիչ աւելի... Նա այնքան անհեռատես գտնվեց ներկայ դէպքում, որ մոռացաւ, թէ առնուազն անյարմար է «Մշակի» մէջ խօսք յարուցանել պ. Քալանթարի անձնաւորութեան մասին։ Սակայն, հաճելի է մեզ աւելացնել և այն, որ պ. Աղայեանց ինքն իր նամակի մէջ հերքում է իր ասածը։ Ահա ապացոյց։ Մի տեղ նա ասում է, որ պ. Քալանթար—բռնակալ է, միւս տեղ աւելացնում է, որ պ. Քալանթար—պատեհական է։ Բռնակալ և պատեհական, դրանք միմեանց բոլորովին հակառակ գծեր են։ Բռնակալը չէ կարող պատեհական լինել, և նա, ով պատեհական է, չէ կարող երբէք բռնակալ կոչվել։ Դա ուրիշ ոչինչ չէ ցոյց տալիս, բայց եթէ այն, որ պ. Աղայեանց երկու դէպքումն էլ չեղվում է ճշմարտութիւնից և սխալվում է...

Անցնենք բուն խնդրին։ Պ. Աղայեանցի նամակի երկու գլխաւոր, ուշադրութեան արժանի կէտերը հետեւեալներն են. 1) «Մշակի» խմբագիրը չը պէտք է որ և է հասարակական հիմնարկութեան մէջ մտնի, որովհետև նա դրանից յետոյ սկսում է պաշտպանել այդ հիմնարկութիւնը և 2) Հրատարակչական ընկերութիւնը ունի շատ թերութիւններ, որ «Մշակը» ծածկում է, սնը սպիտակ ցոյց տալով։

Քննենք առաջին կէտը։ Նախ մի ծիծաղելի բառախաղ է համեմատել Ա. Քալանթարին Աբգար Յովհաննիսեանի հետ։ Նրանք նոյնքան նը մանութիւն ունեն, որքան, օրինակ, պ. Աղայեանց, դուք և Սպասդար Սպանդարեան։ Միակ նմանութիւնն այն է, որ երկուսն էլ իմբազիր են։ Աբգար Յովհաննիսեան երկար տարիներ մեր զանազան հիմնարկութիւնների մէջ բուն դնելով, միշտ այդ հիմնարկութիւնները ծառայեցրել է իր կապրիղին։ Մինչդեռ պ. Քալանթար, ինչպէս և ամենն մի հասարակական բարեխիղճ գործող, ձգտել է ինքը ծառայել այդ հիմնարկութիւններին։ Այլ բան է ծառայեցնել, այլ բան է ծառայել։ Հրատարակչական ընկերութեան կամ Ներսիսեան դպրոցի մէջ միշտ մնալու համար, պ. Յովհաննիսեան աշխատում էր, որ երբէք անդամները չը շատանան, կանոնաւոր ժողով չը լինի, ընտրութիւն չը նշանակվի, կօնտրոլ չը լինի։ Իսկ այն օրից, երբ գործերն անցան մեր կուսակցութեան ձեռքը, պատկերը բոլորովին փոխվեց։ Թէ Հրատարակչական ընկերութեան, թէ Ներսիսեան դպրոցի մէջ՝ ընտրողները իրանք են ստիպել պ. Քալանթարին, որ նա համաձայնվի ընտրվել, գնահատելով նրա գործունէութիւնը, և ոչ ոք, ոչ Քալանթար, ոչ մի ուրիշը չէին կարող, ինչպէս ասում են՝ ներս խծկվել, որովհետև դա միանգամայն դէմ է այն ոգուն, որ այժմ մտցրված է մեր հիմնարկութիւնների մէջ։

Այդ մէկ։ Միւս կողմից դուք մեղադրում եք ճշմարտութեան դէմ, ասելով, որ «Մշակի» խմբագրի մատնակցութիւնը որ և է հիմնարկութեան մէջ զրկում է «Մշակին»՝ մարակելու, քննադատելու հնարաւորութիւնից։ Գրիգոր Արծրունին բաւական ժամանակ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու էր, և դումայի ձայնաւոր, և հէնց այդ ժամանակ ամենախիստ կրիտիկայի էր ենթարկում այդ հիմնարկութիւնները։ Այդ կողմից ոչ պ. Քալանթար, և ոչ մի ուրիշը «Մշակի» խմբագրութեան մէջ՝ չեղվել չեն կարող և չեն էլ թոյլ տայ իրանց։ Մի քանի տարի է պ. Քալանթարը հոգաբարձու է Ներսիսեան դպրոցում և նախագահ Հրատարակչական ընկերութեան, բայց այդ երկու հիմնարկութիւնների մասին էլ «Մշակի» մէջ տպագրվել են ամենախիստ քննադատութիւններ։ Միթէ դուք չէք կարդացել և չէք յիշում «Մշակի» մէջ ամենակծու կրիտիկա՝ Հրատարակչական ընկերութեան տպած գրքերի լեզուի, թարգմանութեան, ընտրութեան, նոյն իսկ տիպի մասին։ Կամ մոռացել էք այն յարձակումները, որ տպագրվել են Ներսիսեան դպրոցի գործերի մասին։ Եթէ մոռացել էք, թերթեցէք նորից։ Ձեր լոգիկայով, Արծրունին չը պէտք է ընտրվէր ոչ Հրատարակչական ընկերութեան նախագահ և ոչ կաթողիկոսական պատգամաւոր, որովհետև նա պէտք է պաշտպանէր կամ ընկերութիւնը կամ իր ընտրած կաթողիկոսին։ Սակայն դուք խօսք տեսաք, որ «Մշակը» բոլորովին այլ կերպ վարվեց, որքան թոյլ էին տալիս և թոյլ են տալիս իրանից անկախ պայմանները...

Դառնանք երկրորդ կէտին, այն է Հրատարակչական ընկերութեան թերութիւններին, որ դուք համարում էք «երկու անգամ երկու չորսի» նման պարզ, թերութիւններ, որ իբր թէ «Մշակը» չէ քննադատել։ Սակայն այդ կէտի մասին առաջին խօսքը ձեզ ենք տալիս։ Մենք չը գիտենք այդ ինչ ահագին թերութիւններ են մի ընկերութեան մէջ, որ մի քանի տարվայ ընթացքում իր անդամների թիւը 17-ից հասցրեց 500-ի, որ ոչնչից այժմ տարեկան 7000 ռուբլու բիւջէ է կազմում, այնքան գրքեր է տպագրել և ձգտում է տպագրել, որ նոյն իսկ ընդհանուր ժողովում մի քանի «գրականագէտնե-

---

II

Դերվիշը ճաչից յետոյ մօտեցաւ ջրհորին, ծարաւը յագեցրեց, ապա պառկեց արմաւենու ստուերի տակ հանգստանալու։

Ղազին իր ծառաներին հրամայեց ճաշ պատրաստել։ Նրա հրամանը անմիջապէս կատարվեց։ Ծառաները ասիական ճոխ սեղան պատրաստեցին և իրանք հեռացան դէպի իրանց նախկին տեղը։

Մարգարէի փոխանորդը սկսեց փառաւոր կերպով ճաշել։ Ասիական ամենաընտիր խորտիկներից էր բաղկացած Ղազիի պաշարեղէնը և խիստ լաւ ախորժակով ուտում էր նա... Դերվիշին չը հրաւիրեց։ Վերջինս վիրաւորվեց իր ընկերի այդ կոպիտ անքաղաքավարութիւնից, բայց և այնպէս լռութիւն պահպանեց, առանց մէկ խօսք, բառ արտասանելու։ Երբ Ղազին վերջացրեց ճաշը, ծառաները եկան և ժողովեցին։ Ղազիի հրամանով մէկ գորգ փռեցին գետնին, իսկ իրանք գնացին հանգստանալու։ Մարգարէի փոխանորդը կրկին աղօթեց Ալլահին և նրա մարգարէին՝ երեսը ուղղած դէպի Մեկկա...

Աղօթքը վերջացրեց և ապա սկսեց բարձրաձայն աղաղակել.

—«Փառք, հազար բերան փառք քեզ, ով մեծդ մարգարէ...»

—Լռեցէք, անպիտան, գոռաց դերվիշը դառնալով Ղազիին։

—Ինչու, լիրբ դերվիշ, միթէ մեղք ու յանցանք է Ալլահին աղօթելը։

—Լռեցէք, կեղծ կրօնաւոր, եթէ ոչ մահը անխուսափելի է ձեզ համար. տեսնում էք այս գաւազանը, գոչեց դերվիշը գաւազանի ծայրը ուղղելով դէպի Ղազին։ Վերջինս ապուշի նման սկսեց նայել դերվիշի երեսին։ Կրօնական ֆանատիկոսութիւնը, որով վառված էր մարգարէի փոխանորդը, կատաղեցրեց մոլեռանդ մուսուլմանի հոգին։ Նա պատրաստվեց յարձակվելու դերվիշի վրա և տեղն ու տեղը սպանել նրան, բայց երբ աչքերը վեր բարձրացրեց և քննական հայեացքով նայեց իր հակառակորդին, նուաստացաւ։ Ծառաներին օգնութեան կանչել չէր կարող. նրանք հեռւում պառկած՝ ընկել էին անոյշ քնի գիրկը... Ղազին ստիպված եղաւ լռութիւն պահպանել։

—Դուք, Ալիաքպար (այդպէս էր կոչվում նա), ինչու համար փառաբանեցիք մեծ մարգարէին։

—Որովհետև նա միակ միջնորդն է մեր և Ալլահի միջև։ Մենք նրա միջնորդութեամբ կարող ենք «ջէննեթի» արժանանալ։

—Եթէ դուք մարդասպանութիւն կամ մի ուրիշ չարիք գործէք—մեծ մարգարէն կարող է ձեզ «ջէննեթի» արժանացնել։

—Կարող է, դրական կերպով պատասխանեց Ղազին։

Դերվիշը ծիծաղեց։

—Ինչու ժպտացիք, դերվիշ, միթէ մի յիմար խօսք ասացի, վրդովված ձայնով հարցրեց Ղազին։

—Լսեցէք, Ալիաքպար։ Դուք յիմար էք, թէ խելօք, այդ ինձ այնքան չէ հետաքրքրում։ Բայց մահմէդականներդ, ընդհանրապէս ասած՝ այնքան խելացի չէք, որքան դուք կարծում էք։ Ինչու։ Ահա թէ ինչու։ Ձեր տուած բացատրութեան համաձայն, մեծ մարգարէն համ արդարների, համ մեղաւորների պաշտպան է հանդիսանում Աւլահի մօտ։ Միթէ այդպիսի դատողութիւն, որ յատուկ է մահմէդականներդ, յիմարութեան սահմանից դէնը չէ անցնում...

—Ուրեմն դուք մարգարէին չէք հաւատում։ Չէք ընդունում որ նա է մեր գործերի առաջնորդը։ Նա է փառք, պատիւ, հարստութիւն և աղքատութիւն բաժանողը... Հերքում էք այս բոլորը...

—Այո, պատասխանեց դերվիշը և շարունակեց,—արդարև եթէ մեծ մարգարէն է բաժանում մարդկանց փառք, պատիւ, ինչու այդ ամենը տալիս է նրանց, որոնք ոչ մի արժանաւորութիւն չունեն... Միթէ այդպիսի դատողութեամբ, որով պարծենում էք դուք, Ալիաքպար, մենք չենք հանում այն եզրակացութեան՝ որ մեծ մարգարէն սոսկ անձնաւորութիւն է և չարժէ նրան պաշտել, որպէս «Աւլահի առաքեալ...» Արժէ՞ պաշտել կեղծութիւնը, Ալիաքպար...

—Ո՛հ, ականջներս, խլացէք, սա Աւլահին էլ է հայհոյելու։

—Ալիաքպար, սառնասրտութեամբ լսեցէք ինձ։ Աւլահը մեզ մարդ ստեղծելով կարծում էք չէ՞ դժբաղդացրել մեզ... Եթէ նա, Աւլահը, մեզ մեղաւ ստեղծէր, մենք սիզաւէտ սարերի ամենահոտաւէտ ծաղիկների հիմերով պէտք է ապրէինք... Իսկ եթէ արծիւ կամ մի ուրիշ թռչուն ստեղծվէինք մենք, կարող էք երևակայել մեր բաղդաւորութիւնը, Ալիաքպար... Մենք վեր կը սաւառնէինք և երկնակամարի անհուն տարածութիւնից կը դիտէինք այս աշխարհը, ուր ամեն ինչ՝ չարչարանք, վիշտ և տանջանք է... Դուք, Ալիաքպար, շարունակեց դերվիշը, ասացէք խնդրում եմ, երբ էք լսած կամ տեսած, որ խոզերը փառք տան մեծ մարգարէին. բայց և այնպէս նրանք պահպանում են իրանց գոյութիւնը՝ պատռելով գետնի սիրտը... Այդպէս են նաև մարդիկ... Ում սուրն աւելի է կտրում, նա աւելի և աւելի է չաղանում։ Ուժեղներն ամենաբաղդաւորներն են... Եւ եթէ ձեզ նման բաղդաւորների աղօթքի ձայնը մեծ մարգարէն հասցնում է Աւլահի աթոռին, միթէ թիւրաւոր սովեալների, հարստահարվածների, թոյլերի և անօգնականների թափած դառն արտասուքների հեծկլտոցը մեծ մարգարէն չէ հասցնում Աւլահի աթոռին... Եթէ հասցնում է, երբ եկաւ «երկնքի դատաստանը»։ Զարգարծը, լիրբն ու խաբեբան, հարստահարիչը և բռնաւորը տակաւին շարունակում են իրանց դարաւոր արհեստը... Իսկ երկինքը լուռ ու մունջ է. նա վերևից—արդարութեան որոտումներ չէ թափում...»

Ղազին, որ բոլոր ժամանակը լուռ ու մունջ լսում էր դերվիշի ասածները, ոչինչ չը պատասխանեց։

ՄՇԱԿ

րի» զարմանքը չարժեց։ Մենք «Մշակի» քննադատական ուղղութեան համապատասխան չենք համարում հաւատացնել, թէ այն՝ ինչ որ կայ, չը կայ, և բռնված միմիայն քննադատելու ցաւից՝ ուրանալու այն գործունէութիւնը, որ ցոյց է տալիս այդ ընկերութիւնը։ Քննադատելը դատապարտել չէ նշանակում։—Սակայն հեռու չը գնանք։ Կրկնում ենք, որ մենք ձեզ ենք տալիս խօսքը, և սպասում ենք, որ ցոյց տաք թէ 1) այդ ինչ վիթխարի պակասութիւններ են, որ ընկերութիւնը ունի, և 2) որոնք են դէպքերը, երբ «Մշակը» տեսել է այդ թերութիւնները և բաց չէ արել։ Բարեհաճեցէք ասել, և մենք այն ժամանակ ձեր առաջ կը դնենք վաստեր։

Վերջացնելով այսքանով, պէտք է աւելացնենք. ձեզ վրա պարտք կայ ցոյց տալու, որ վերջին ընտրութիւնների ժամանակ ձեր պաշտպանած խումբը չէր միացել անհամակրելի տարրերի հետ։ Իսկ ինչ վերաբերում է ձեր պաշտպանութեանը «գրական մաքրութեան դատաճաններին»—դա միայն համարում ենք ձեր կողմից մի ասպետական ձև, որ միայն ձեզ կարող է պատիւ բերել, բայց մաքրել ձեր հովանաւորածներին,—երբէք։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Olga Novikoff („O. K.“) Russia and England: „Proposals for a new departure“, London. 1896.

Տիկին Օլգա Նովիկովա շատ յայտնի անձն է Անգլիայում։ Ժամանակ առ ժամանակ նա հանդէս է գալիս անգլիական մամուլի մէջ իր կարծիքներով և խորհրդածութիւններով ընթացիկ քաղաքական հարցերի մասին։ Քան տարվայ ընթացքում, ինչ նա գործում է Անգլիայում, նա կարողացել է ձեռք բերել լուրջ գրողի անուն, որի դատողութիւններին տրվում է յայտնի նշանակութիւն։

Ներկայ գրքոյկի մէջ, որի անունը նշանակել ենք վերև, Նովիկովա աշխատում է ապացուցանել, որ Ռուսաստանը և Անգլիան պէտք է համաձայնութիւն կայացնեն արևելեան հարցի վերաբերութեամբ և այդպիսով լուծեն նրան. իսկ քանի կը շարունակվի այդ երկու պետութիւնների հակառակութիւնը, անկարգութիւնները չեն վերանայ Թիւրքիայում, որովհետև հիւանդ մարդը ինքը անզօր է իր այժերով և նախաձեռնութեամբ վերանորոգելու իր պետական կեանքը և գործավարութիւնը։

Տիկին Նովիկովա, խօսելով հայոց հարցի մասին, ասում է. «Հայոց հարցը Հայաստանի հարց չէ. սա պարագօկս չէ, սա փաստ է. հայոց հարցը Հայաստանի հարց չէ, այլ հայերի։ Հայերը ցրված են Թիւրքիայում ամենուրեք և մանաւորապէս ասիական Թիւրքիայում։ Այդպիսով հայոց հարցը յայտնի գաւառների հարց չէ, այլ ամբողջ Եւրոպայի։ Այդ հանգամանքն է ստիպում Ռուսաստանին զգայլ լինել այդ հարցում։ Անգլիան կարող է պակաս վրդովմունքով մօտենալ այդ հարցին, որովհետև նրա տան դուռը հեռու է, իսկ մերը մօտ է։ Ես ասացի, որ հայերը ամենուրեք են։ Հայոց հարցը ներկայումը ամենավտանգաւոր պէտք է համարել ոչ Սասունում և ոչ Ասիայում առհասարակ. հայոց հարցի հնոցը Կ. Պոլիսն է, որտեղ 100,000 հայ կայ։ Հայերը ցրված են ամեն տեղ, չուտ են աչքի ընկնում, լինելով բանկիրներ, վաճառականներ, դրամատէրեր... Հայերին պատահած դժբաղդութիւնները չէին կապված մի յայտնի տեղի հետ. նրանք եղան ամեն մի նշանաւոր կէտում, ուր հայեր կային, և հայերին ազատութիւն տալու խնդիրը այդպիսով մի մասնաւոր, նեղ, կղզիացած խնդիր չէ, այլ շատ ընդարձակ»։

Կնճռոտ խնդիրը լուծելու համար տիկին Նովիկովա բերում է մի շարք խորհրդածութիւններ։ Նա հնարաւոր է գտնում Կ. Պոլիսը դարձնել մի չէզոք կենտրոն եւրոպական իշխանի կառավարութեան տակ և Կ. Պոլսում կազմել բալկանեան դաշնակցութեան կենտրոնական վարչութիւն և բաժանել Թիւրքիան։ Հեղինակը կարծում է, որ Ռուսաստանը ձեռնհաս է զսպել վայրենի քիւրդերին և ուրիշ ապազգաբարոյ ցեղերին Փոքր-Ասիայի արևելեան մասում, իսկ արևմտեան մասում՝ Ֆրանսիան, որ արդէն գործել է այդ ուղղութեամբ Լիբանանում։

Հեղինակը կարծում է, որ Անգլիան՝ քրիստոնէութեան և մարդասիրութեան շահերի համար՝ պէտք է համաձայնութիւն կայացնի Ռուսաստանի հետ, զսպելով իր ագահութիւնը և հակառակութիւնը։

Ռ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Մարտի 23-ին

Նորերս մեր տանուտէրը, համաձայն նահանգապետի կարգադրութեան, ժողովի էր հրաւիրել հասարակութեան խորհրդակցելու այն միջոցների մասին, որ հարկաւոր կը լինի գործադրել, երբ հարևան Պարսկաստանից մեզ մօտ կանցնի ժանտախտը։ Ժողովի կարևոր նպատակը աչքի առաջ ունենալով, շատերը շտապել էին ներկայ գտնվելու այնտեղ։ Հրաւիրված էր իբրև ներկայ հարցում հեղինակաւոր անձն և տեղական բժիշկը։ Ժողովում երկար խօսվեց գիւղի այս կամ այն պակասութիւնների և այն միջոցների մասին, որ հարկաւոր է գործադրել։ Բայց որովհետև բոլոր միջոցները չէր կարելի մի այդպիսի ժողովում նախատեսել, ուստի ընտրվեց մի մանտաժողով, նրան յանձնելով միջոցների մասին խորհելու և գործադրելու։ Առ այժմ սկզբնական ծախքերի համար յատկացրված է 100 ր. և տունը մէկ մշակ՝ գիւղը կեղտից մաքրելու համար, իսկ մնացած ծախքը պէտք է դրվի հարկի վրա։ Մանտաժողովը բաղկացած է հետևալ անձինքներից. Վերին Ագուլիսի հայերի կողմից՝ բժիշկ Գ. Սարգսեանց, Ս. Արասխանեան, Ս. Թաղէոսեան և Մ. Մելիք-Մուսեանց. Թիւրքերի կողմից՝ Մաշադի Սուլթանմամադ. Վերին Գետ գիւղի հայ համայնքից՝ Մ. Խօջամիրեանց. իսկ Թուրքերից՝ Մաշադի Նաջաֆ։ Մանտաժողովին պիտի աջակցեն տանուտէրը և իր օգնականը։

Մանտաժողովը, նախագահութեամբ բժշկի, արդէն ունեցաւ իր առաջին նիստը, որտեղ մանրաման քննեցին այն միջոցները, որոնք պիտի գործադրեն գիւղի ապահովութեան համար։ Խորհրդակցութեան եզրակացութիւնը ամփոփված է 18 կէտերում, որոնցից յիշենք մի քանի գլխաւորները. 1) սպանդանոցը իր ներկայ անյարմար տեղից տեղափոխել մի ուրիշ յարմար տեղ, որտեղ ցոյց կը տայ մանտաժողովը. 2) մսավաճառների համար յատկացնել առանձին տեղ և պարտաւորացնել մսերը կախել առանձին չանգալների վրա, փոխանակ մեխերի, որոնք ցցված են լինում կեղտոտ փայտերի մէջ և իրանք մսավաճառներն էլ կապեն սպիտակ գոգնոցներ. 3) շուկայի ետևում գտնվող արտաքնոցը մաքրել տալ կամ նորը կառուցանել նրա փոխարէն. 4) մաքրել չուկան և փողոցները, առաջինը շաբաթը երկու անգամ՝ հասարակութեան հաշվով, մնացած դէպքերում պարտաւորեցնել տանտէրերին, որ իրանք մաքրեն ամեն շաբաթ իրանց տան առաջները. 5) պարտաւորացնել, որ մաքուր պահեն թէ ընակարանները և թէ արտաքնոցները. վերջինիս մէջ պարտաւոր են կիր ածել երբեմն. 6) կանոնաւորել աղբիւրները, ինչպէս որ այդ ցոյց կը տայ մանտաժողովը և այլն։

Աչքի առաջ ունենալով մանտաժողովի անդամների եռանդուն վերաբերմունքը դէպի իրանց ստանձնած գործը, կարելի է յուսալ, որ մեր գիւղը կը մաքրվի և կը կանոնաւորվի։

Ա. Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 2-ին

Շնորհակալութեամբ ընդունում եմ ձեր առաջարկութիւնը, որով հրաւիրում էք ինձ նոյն իսկ «Մշակի» մէջ յայտնել իմ բողոքը Հրատարակչական ընկերութեան վարչութեան նախագահի դէմ։ Այսպիսի մի առաջարկութիւն միայն պատիւ կարող է բերել «Մշակի» խմբագրութեանը, ապացոյց լինելով՝ որ նա չէ կամենում որ և է կասկածի ենթարկել իր անաչառութիւնը։ Համակիր չեմ միայն ձեր ակնարկութեանը, որ վերաբերում է մեր այն գրողներին, որոնց համարում էք դաւաճաններ գրական մաքրութեան։ Այդ գրողներին ես այնքան արդար եմ համարում, որ պատրաստ եմ նրանց դաւաճանութիւն համարված յանցանքը ինձ վրա առնելու՝ իբրև մեղսի խայթոց։

Դառնանք ուրեմն բուն խնդրին։ Հրատարակչական ընկերութեան երկարամեայ փորձը ցոյց է տուել մեզ, որ ընկերութեան վարիչների մէջ խմբագրի պաշտօն ունեցող անձնաւորութեան մուտք գործելը միշտ բարոյական վնաս է հասցրել թէ ընկերութեանը և թէ խմբագրութեանը։ Խմբագիր մարդը այդ ընկերութեան մէջ այնպէս է վարվում, ինչպէս իր խմբագրութեան մէջ, ուր նա սովոր է մի տեսակ միապետ հանդիսանալու։ Այսպէս էր մի ժամանակ պ. Աբգար Յովհաննիսեանը, իբրև նախագահ ընկերութեան վարչութեան, այսպէս է այժմս էլ պ. Աղեքսանդր Քալանթարը։ Ընկերութիւնը մի բռնակալի ձեռքից ազատվելով՝ ընկել է երկրորդ բռնակալի ձեռքը։ Այս հանգամանքը վնասակար լինելով ընկերութեանը, ոչ պակաս վնաս է հասցնում և «Մշակ» լրագրին։ Այո, երբ «Մշակը» յարձակողականից դառնում է պաշտպանողական, դրանով նա դաւաճանում է իր դրօշակին, նա դադարում է հիմնադրի «Մշակը» լինելուց։ «Մշակը» կարող է և պէտք է ամեն մի վարչութեան մէջ էլ իր ընտրելիներն ունենալ, պաշտպանել նրանց թեկնածութիւնը—լծել նրանց մի կառքի մէջ, բայց նոյն իսկ իր այդ ընտրած նժոյգներից անպակաս պիտի պահէ իր առաջ մղող մրտակը, իսկ ինքը—այսինքն իր խմբագիրը—երբէք այդ կառքում լծվելու անհեռատեսութիւնը չը պէտք է ունենայ. նա պէտք է առաջնորդէ ամենքին ամեն տեղ, և ոչ թէ առաջնորդվի և այլոց մտրակներին ենթարկվելով պաշտպանվի։ Ցիշեցէք, թէ ինչպէս էր վարվում այս կողմանէ «Մշակի» հիմնադիրը։ Նա յայտարարում էր, թէ այս ինչ մոլորակի վրա ընտրութիւններ են նշանակված, և առաջարկում էր Աբգարին՝ երթալ այնտեղ ընտրվելու։ Այժմ պ. Ա. Քալանթարը հէնց այդ ծայրերի ընթացքն է բռնել։ Ինքը պ. Քալանթարը դաղափարով և բնաւորութեամբ լինելով պատեհապան, չունենալով վերանորոգչի ձգտում ու եռանդ, այդ բանը վընասակար համարելով իր ներքին ձգտումներին, հէնց որ մտնում է մի ընկերութեան մէջ, նոյն ընկերութիւնը այլ ևս «Մշակի» քննադատութեան առարկայ չէ դառնում։ «Մշակը» այնուհետև ոչ միայն չէ յարձակվում ընկերութեան թերութիւնների վրա, այլ սկսում է պաշտպանել նոյն իսկ այդ թերութիւնները, ամեն սև սպիտակ ցոյց տալով և ոսկեստակ տալով ամեն մի աչկարա ճշմարտութիւն։ Կը կամենայիք գուցէ որ փաստեր բերեմ տեսութիւնս գործնականապէս ապացուցանելու։ Փաստեր դուք ինձնից աւելի չատ կարող էք բերել, եթէ կամենաք անաչառ լինել։ Կամ ինչ ապացոյց պէտք է բերել, որ երկու անգամ երկուսը չորս է, քանի որ դա մի բացարձակ ճշմարտութիւն է։ Այժմ սրանից աւելին չեմ կարող ասել, կը վերջացնեմ խօսքս միայն մի խորհրդով, որ «Մշակի» խմբագիրը ոչ մի ընկերութեան վարիչ չը հանդիսանայ, եթէ թանդ է գնահատում «Մշակի»

Արեգակն արդէն թեքվել էր դէպի իր մուտքը։ Քամին թեթև կերպով սկսեց փչել։ Մեր ճանապարհորդները վերկացան և շարունակեցին իրանց ճանապարհը։

Ղազին նստած ջորու վրա՝ ամենից առաջ էր գնում։ Նրան հետևում էին իր ծառաները՝ նստած իրանց աւանակների վրա։ Իսկ վերջիններին սաաբսրիկ հետևում էր ծերունի դերվիշը...

III

Լուսնկայ երեկոյ էր։ Լուսինը կապոյտ երկնակամարի անհուն տարածութեան մէջ լողալով առաջ էր ընթանում. կարծես մի ահագին ադամանդ փայլում էր ծովի երեսին։

Այդ պահուն մեր ճանապարհորդները գըտնվում էին Թուսի *) Շարիֆապատ կոչված աւանում։ Ղազին փառաւոր կերպով բաղված դորգերի վրա՝ զալեան էր ծխում։ Իսկ նրա ծառաները երեկոյեան համար ուտելիքի պատրաստութիւններ էին տեսնում։

Դերվիշը նրանցից քիչ հեռու՝ փռել էր գետնին եղջերուի իր հնամաշ մորթին և վրան նըստած՝ նայում էր դէպի աստեղազարդ երկինքը... Ղազին, որ չատ էր հետաքրքրվում դերվիշի անձնաւորութեամբ, ծառաներից մէկին հրամայեց՝ դերվիշին կանչել։ Նրա հրամանն անմիջապէս կատարվեց։ Դերվիշն եկաւ և բազմեց Ղազիի մօտ։

—Աղա դերվիշ, ասացէք, խնդրում եմ, դուք ինչ կրօնի, ինչ դաւանանքի տէր էք։ Ես տեսնում եմ, որ դուք ուղղափառի ոգի չունէք, թէպետև՝ այդ խիստ ցաւալի է։

—Ես պատկանում եմ «իրաւունքի» վարդապետութեան։

—Այսինքն քրիստոնեայ էք։

—Ոչ։

—Մովսիսական։

—Ո՛չ։

—Ուրեմն ուղղափառ էք, այս անգամ ուրախութեամբ բացականչեց Ղազին։

—Եւ ոչ մահմեդական։

—Ցաւալի է, խիստ ցաւալի. ուրեմն բուդդայական էք։

—Ո՛չ։

—Բաբիական։

—Ո՛չ։

—Ալիլլահական էք։

—Ո՛չ, ոչ։

—Ապա ինչպէս է կոչվում ձեր կրօնը։

—Ասացի, որ իմ դաւանած կրօնը «իրաւունք» է կոչվում։

—Այդ ինչ տեսակ վարդապետութիւն է, առաջին անգամ եմ լսում։ Ի սէր Ալլահի, մեծ մարդարէի, բացատրեցէք ինձ ձեր դաւանանքի գլխաւոր սկզբունքները։

—Մեծ ուրախութեամբ, պատասխանեց դերվիշը և շարունակեց.—նախ պէտք է իմանալ թէ՝ ովքեր պատճառ եղան «իրաւունք» վարդապետութեան լոյս աշխարհ գալուն։—Զարիքները, որոնց մարդիկ իրանց համար կրօն դարձրին և նրանց անունով սկսեցին իրար վրա բռնանալ։ Ահա միակ պատճառը՝ «իրաւունք» վարդապետութեան ծնվելուն։ Միթէ այդպէս չէ, Ալիաքպար. դուք, ի հարկէ, քաջ ծանօթ կը լինէք իսլամական պատմութեան հետ։ Նա կրօնի անունով որքան աւերումներ, անդթութիւն, որքան անմեղ և իզուր արիւն է թափել և թափում է այսօր։ Գալով միւս կրօններին՝ այսքանը միայն կասեմ, որ նրանք էլ իրանց հերթում մի և նոյն յանցանքն են գործել աւելի կամ պակաս չափով... Բայց միթէ այդպիսով աշխարհս կառաջադիմէ և մարդիկ բաղդաւոր արարածներ կը լինեն։ Չեմ կարծում։ Թերթեցէք կրօնների պատմութեան էջերը, այն ժամանակ իմ ասածները ձեզ հասկանալի կը լինեն, Ալիաքպար...

—Բայց «իրաւունքի» վարդապետութիւնը, առաջ տարաւ դերվիշը,—այդպիսի սուր ոգով չէ գործում։ Նա ազատ է թողնում անհատին, ինչ ձևով կամ ինչ հասկացողութեամբ ուզում է պաշտել միակ Ալլահին, բայց ոչ հրապարակով, այլ՝ իր սրտի խորքում... Ալլահին պաշտելու ծիսակատարութիւնների համար արիւնհեղութիւններ և զանազան տարաձայնութիւններ չէ ընդունում «իրաւունքի» վարդապետութիւնը... Վերջինս անտեսանելի Ալլահին ցած է իջեցնում երկնքից և նրան անուանում է խիղճ։ Մարդիկ պարտաւոր են լսել իրանց խղճի ձայնին, մի և նոյն ժամանակ իրանց բոլոր գործողութիւնները ենթարկել «իրաւունքի» անաչառ դատաստանին... Ով չէ գործում խղճով և իրաւունքով՝ նա դադարում է մարդ լինելու իրաւունքից... Մարդիկ եղբայրներ են, նրանց չը պիտի անջատել միմեանցից, այլ՝ մօտեցնել, հարազատացնել իրար հետ՝ մտքով ու գաղափարով։ Ահա այդ ժամանակ մենք, մարդիկս աշխարհս երեսին ամենաբաղդաւոր արարածները կը լինենք... Ահա սրանք են «իրաւունք» վարդապետութեան գլխաւոր սկզբունքները, Ալիաքպար. ես վերջացրի իմ ասելիքս. Ա հ ա հ ա կ կ... (Ով արդարութիւն, ով իրաւունք)։

—Անիծեալ դերվիշ, անհաւատութեան աւազանում ես մկրտված։ Թող գիշերը խռով լինի գլխիդ։ Հեռացիր ինձնից, ով պիղծ անհաւատ...

Դերվիշը լուռ ու մունջ հեռացաւ նրանից։ Նա գնաց և մի անկիւն դատաւ հեռուում, ուր պառկեց քնելու։ Գլուխը դրեց մերկ գետնի վրա, երեսը դարձրեց վերև, դէպի երկինքը, ապա բարձրաձայն սկսեց աղաղակել.

—Ո՛վ իրաւունք...։

Պերճ-Միւնի

*) Թուսը՝ այժմեան Մեշհեդ քաղաքն է, որ գտնվում է Խորասանում։

առաջադիմական դրոշակը և չէ կամենում նրան սև գոյնով ներկել։

Ղ. Աղայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

(Շարունակութիւն)

Pro domo sua

Երևան, մարտի 24-ին

Այժմ արդէն քիչ է մնում, որ հանենք մեր ցանկացած կէտին։ Ընթերցողը արդէն հաւատում է, որ պ. Յովհաննիսեան իր նամակում ուզել է հասկացնել, թէ ամբողջ վարչութիւնը վստահութիւն չէ վայելում հասարակութեան կողմից։ Բայց պէտք է մի քայլ էլ անել. չէ որ մարդ կարող է վստահութեամբ վերաբերվել այնպիսի անձանց, որոնք վստահութիւն չեն վայելում ուրիշների կողմից, ինչպէս մենք մեծ համակրութեամբ ենք վերաբերվում դէպի կեղծումն, աղաւաղումն և աչքակապութիւնը, որոնք, պէտք է ասել, ամենեին համակրութիւն չեն վայելում ազնիւ գրողների շրջանում։ Ի՞նչ անենք։ Գրենք թէ պ. Յովհաննիսեան ասել է, որ վարչութիւնը անվստահելի է։ Ո՞վ է ուշադրութեամբ կարդում յօդուածներ. ո՞վ պէտք է նկատի, թէ «վարչութիւնը անվստահելի է» և «վարչութիւնը վստահութիւն չէ վայելում» տարբեր բաներ են, որովհետև անվստահելի է կը նշանակի «վստահութեան արժանի չէ իմ կարծիքով», իսկ վստահութիւն չէ վայելում ցոյց է տալիս միայն ուրիշների վերաբերմունքը, որ կարող է և անարդար լինել, այնպէս որ հակասութիւն չի լինի, եթէ մէկն ասի՝ «այս ինչ պարոնը վստահութիւն չէ վայելում, բայց այդ թիւրիմացութեան կամ անարդարութեան հետևանք է, որովհետև նա միանգամայն վստահելի է։» Այս աչքակապութիւնն էլ որ անում ենք, բերէք մի զեղծում բառն էլ մէջ գցենք և ընթերցողին հասկացնենք, թէ, եթէ պ. Յովհաննիսեան վարչութիւնը անվստահելի է անուանում, կը նշանակի նա ընդունակ է համարում վարչութեան անդամներին զեղծում գործելու. եկէք գրենք, —«Դուք, պ. Յովհաննիսեան, ինչպէս երևում է, երևակայութիւնով մի մեծ զեղծումն էք բացել, յայտնելով ի լուր աշխարհի, թէ վարչութիւնը անվստահելի է» (№ 20)։—Այս շատ լաւ եղաւ. ինչպէս երևում է, երևակայութիւնով, անորոշ խօսքեր են և ընթերցողի վրա աղդում են ափիոնի նման. լաւ արեցինք նոյնպէս, որ զեղծումն բառը գործ ածեցինք, դա էլ անորոշ է. եթէ միանգամից վատնել խօսքը գործ ածէինք, ընթերցողը դուցէ վեր թռչէր և աչքերը բաց անէր։

Հիմա որ հասանք. զեղծումն ասեցինք, բայց մեծ զեղծումն. ընթերցողի ականջը արդէն պատրաստ է, քաղենք այսքան երկար աշխատանքի պտուղը. վիրաւորված անմեղութեան կերպարանք ընդունենք և դիմենք պ. Յովհաննիսեանին,—«եթէ քաջութիւն ունէք. եկէք պաշտպանելու ձեր մերկացումները և գտնելու մեր վատնած գէթ մի կոպէկը» (№ 20), եկէք գրենք նոյնպէս,—«ուրիշի վրա վստահութիւն չունեցող, պ. Յովհաննիսեան» (№ 25)։ Թող պ. Յովհաննիսեան պատասխանի, որ այդ սուտ է և անամօթ սուտ. թող իր պատասխանում յիշեցնի ընթերցողներին, որ ինքը գրել էր, թէ «ես այդ թերահաւատների թիւում չէի». ոչինչ. մինչև նրա պատասխանելը ընթերցողները կը հաւատան մեր խօսքին (ինչպէս չը հաւատալ ամբողջ վարչութեան. ո՞ր պաշտոնական մարմինը իրան թոյլ կը տայ ակնյայտնի սուտ ասել), իսկ յետոյ թող համոզվեն, որ մենք իրանց խաբել ենք. մի և նոյն է, էլի մեր գրածը մի հետք կը թողնի ընթերցողների մէջ, թէկուզ մի անորոշ հետք, մանաւանդ որ շատերը պատահմամբ գուցէ մեր յօդուածը կարդան, իսկ պ. Յովհաննիսեանի պատասխանը՝ ոչ։ Զուր չեն ասում Ֆրանսիացիք. «Calomniez, calomniez, en y restera toujours quelque chose»։

Ինչպէս տեսնում էք, ընթերցող, պ.պ. Ղարաջեան և Տէր-Մարտիրոսեան ամենեին յետ չեն մնայ այն միջնադարեան Դօմինիկեան աբեղայից, որ մի ջերմեռանդ կաթոլիկի վրդովված խիղճը հանգստացնում էր հետևեալ դատողութեամբ.—«Դու ասում ես, որ մեծ պասին ձու ուտելիս յանկարծ նկատել ես, որ մէջը հաւի սաղմ կայ. ձուն պասի կերակուր է, այնպէս որ հարցը սաղմի վրա է. բայց ի՞նչ է հաւի սաղմը. նա չատ նման է որդի, իսկ որդը, բնական գիտութեան համաձայն, պատկանում է ձկների դասին. իսկ ձուկը պաս է, ուրեմն դու պաս չես կերել»։ Եթէ ինձ թոյլ տաք, ընթերցող, այդ ձեով դատել, ես ամենայն հեշտութեամբ կապացուցանեմ, որ պ. Տէր-Մարտիրոսեան լուսինը գողացել է, դրել գրպանը։

Բայց «revenons a nos moutons»։ Պ.պ. Ղարաջեան և Տէր-Մարտիրոսեան այնքան աջողութեամբ ապացուցանելուց յետոյ, որ մի քանի ասելով ես ուզել եմ ասել բոլորը, շարունակում են.—«բայց, որպէս մանագիտութեամբ իրաւաբան, իր յօդուածն այնպէս է կազմել, որ նրան բռնել չի լինի և վարչութեան անդամներից որ մէկն էլ որ դիմի նրան բացատրութեան համար, կը պատասխանի, թէ իր մասին չէ գրել, այլ միւսների մասին» (№ 20)։ Խեղճ անդամներ, որոնց հակառակորդը նենգամիտ իրաւաբան է, կամ, աւելի ճիշդ ասած, խեղճ անդամներ, որոնք չեն հասկացել, որ կարելի էր ամբողջ վարչութեան կողմից դիմել այդ իրաւաբանին և հարցնել.—«ո՞ւմ էք ի նկատի ունեցել, պարոն, մի քանիսը ասելով». այն ժամանակ այդ իրաւաբանը, ինչքան էլ նա խորամանկ լինէր, ստիպված կը լինէր պատասխանել հարցին և յայտնել վարչութեան անդամներին այն, ինչ որ պատասխանել էր բոլոր հետաքրքրվողներին, այն է, որ երբ մի փոքրիկ խումբ կազմվեց և վճռեց՝ անպատճառ զլուխ բերել երեկոյթ յօգուտ գաղթականների, հարց ծագեց, թէ ո՞ւմ պէտք է տրվի ստացվելիք գումարը և առաջարկվեց այդ գումարը յանձնել Բարեգործական ընկերութեան, ես այդ առաջարկութեան կողմն էի, բայց մի քանի հոգի հակառակեցին, ասելով, որ վստահութիւն չունեն պ.պ. Գէորգ Ղարաջեանի և Սիրական Տէր-Մարտիրոսեանի վրա։

Այդպէս կը պատասխանէի ես, դարձեալ և դարձեալ կրկնելով, որ պ. Ղարաջեանին ես համարել եմ միշտ և այժմ էլ համարում եմ անընդունակ հասարակական փողեր վստահելու և որ չեմ կարող ճանաչել նոյնպէս և պ. Տէր-Մարտիրոսեանին անվստահութեամբ վերաբերվողներին, որովհետև նրան լաւ չեմ ճանաչում և որովհետև առանց անհերքելի փաստերի, կամ այնպիսի վիճաբանների, որ մենք, հարցը բարեխղճութեամբ ուսումնասիրելուց յետոյ, անկեղծօրէն անհերքելի ենք համարում, անուանել մէկին հասարակական փողերի վստահելի՝ այնպիսի սուտ վարմունք է, որ ոչ շատ քիչ բան կը հաւասարվի։ Բացի դրանից, ես կը հակացնէի նրանց, որ այն պարոնները, որոնք վերոյիշեալ ժողովում այդպիսի կարծիք յայտնեցին պ.պ. Ղարաջեանի և Տէր-Մարտիրոսեանի մասին, այդ արեցին ոչ անաչառ բամբասանքի ձեով, այլ երբ որոշ հարց էր դրված վճռելու, որ կապ ունէր այդ խնդրի հետ, իսկ ես «Մշակի» մէջ յիշեցի այդ բանը, որովհետև «Երևանցի» թղթակիցը արդէն հրապարակ էր հանել այդ հարցը և որովհետև այդ թղթակցութեան տպելուց առաջ ես լսել էի, որ լուր է տարածվել, թէ ես եմ եղել վարչութեան անդամներից մի քանիսի վերաբերմամբ անվստահութիւն յայտնողը և ուրեմն ես եմ եղել պատճառը, որ երեկոյթի արդիւնքը չէ յանձնվել վարչութեան։ Զանազան անկիւններում բամբասողներին առանձին-առանձին պատասխանել ես չէի կարող, ուստի և դիմեցի լրագրական խօսքին, որ իմ ցանկացածիս հակառակ հետևանք ունեցաւ, որովհետև այդ «բեխերաւոր կէկէլօներից» մի քանիսը աղաւաղեցին իմ խօսքերս, միւսները թուխակի նման կրկնեցին այդ ակնյայտնի սուտը, որ «ընդնէ բերան դարձաւ գերան», որպէս զի իմ վերաբերմամբ սպառնալից դիրք ընդունելուց յետոյ, վերջ ի վերջոյ ընկնի հնարողների հանճարեղ գլխին, հանճարեղ, որովհետև միայն հանճարը կարող է թօթափել դարաւոր նախապաշարմունքը, այն նախապաշարմունքը, թէ «մի քանի» կը նշանակի ամեն մի անորոշ թիւ մէկից աւելի, հանճարեղ նոյն իսկ ինքնահակասութեան մէջ, որովհետև, պէտք է խոստովանել, ընթերցող, մեր յօդուածագիրները հերքման վերջում պնդում են, թէ վարչութիւնը խորհրդին մի քանի նամակ է գրել, առաջ վող խնդրելով դաղթականների համար (№ 25), մինչդեռ վարչութիւնն ընդամենը մի նամակ է գրել այդ մասքով։ Հասարակ մահկանացուն երբէք թոյլ չի տայ իրան ասել ուրիշներին.—«դուք իրաւունք չունիք մի քանի անուանել ոչ երկուսը, ոչ երեքը, ոչ էլ մինչև անգամ չորսը, իսկ ես իրաւունք ունեմ մի քանի անուանել մինչև անգամ մէկը»։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մարտի 26-ին

Ներկայ պատմական բօպէներին՝ պ. Մուրադբէգեանի հարցասէր ուշադրութիւնը ոչ մի բանով չէ գրավել, բացի այն, թէ ինչպէս հայ դերասանները՝ յանդգնելով հանդերձ ամսական 50–100 ր. ստանալ, իրանց վերջին ներկայացումից յետոյ՝ մի ներկայացում չեն յայտարարել գաղթականների օգտին, «մի միջոց, որ նրանցից ոչ մի կոպէկ չէ պահանջում» (տես «Մշակի» № 31)։ Որովհետև պ. Մուրադբէգեանին շատ է զարմացրել մեր ստացած ռոճիկները, ուստի մենք մի փոքր հաշիւ կը տանք ոչ որպէս պարտաւորութիւն, այլ որպէս զի նա չը նախանձի մեր անանախանձելի վիճակին։ Մենք ստացել ենք ոչ թէ 50—100 ր., այլ մեր ռոճիկներից 75% պակաս։ Անցնում էին ոչ միայն շաբաթներ, այլ և ամիսներ և մենք ոչ միայն մի կոպէկ չէինք վաստակում, այլ և ՀԱՍՍՎում էինք։ Բէնեֆիսը մի հաչէք, որովհետև դա մի վիճակախաղ է, կարող է աջող լինել և չը լինել։ Իսկ թէ մենք ինչ միջոցներով էինք մեր բէնեֆիսները գլուխ բերում, այդ կարծեմ պ. նամակագրին քաջ յայտնի պիտի լինի։ Զը պէտք է մոռանալ և այն, որ միայն 5 ամիս է տևում մեր սեզօնը և այն էլ շատ խարխուլ, իսկ մնացածը 7 ամիսը՝ դրական գործ չը կայ։ Աւելացրէք սրա վրա, թէ դերասանները ինչ ծախսեր ունեն և այն միայն թատրօնական։ Վերջապէս միթէ գաղտնիք է, որ հայ բեմը ընդհանրապէս և հայ դերասանների դրութիւնը մանաւորապէս անապահով է։

Իսկ ինչ վերաբերում է այն կէտին, թէ մենք գաղթականներին ինչպէս ենք վերաբերվել, այդ յայտնի է։ Եւ եթէ «ինքնաբերաբար» ներկայացում մինչև այժմ չէ եղել, դա ունի իր յարգելի պատճառները, որը, եթէ նախ պ. Մուրադբէգեան իմանար և յետոյ հրապարակ գար՝ աւելի լաւ կանէր՝ զուր տեղը չը պղտորելով հասարակութեան կարծիքը դերասանների վերաբերութեամբ։ Մեր վերջին ներկայացումից յետոյ ոռճիկանպետը յայտարարել էր մեզ, որ ոչ մի ներկայացում չի թոյլատրի մինչև պ. կառավարչապետի գալը։ Հետևապէս պարոնը չարաչար սխալվել է դերասաններին մեղադրելով։ Վերջապէս դերասաններից իւրաքանչիւրը (խօսքս ընդհանուրի վրա է) բարեգործական նպատակով տրվող ներկայացումների ժամանակ արել է այն, ինչ իր ուժերը ներել են։

Դերասան՝ Ա. Ցարութիւնեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից։

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չուտով պէտք է քննութեան ենթարկի VII դասարանի ծրագիրը, որ արդէն պատրաստ է։ Հոգաբարձութիւնը մտադիր է եօթերորդ դասարանը բանալ։

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան կառավարչապետի կարգադրութեամբ, գաղթականների փողից էլի 3,000 ռուբլի պէտք է յանձնվի Թիֆլիսի նպաստող մանաժողովին։

—

Ինչպէս յայտնի է, Պետերբուրգում այժմ տեղի ունի մի յատուկ խորհրդակցութիւն ֆիլօքսերայի մասին, որին մասնակցում է Կովկասի կողմից երկրագործութեան մինիստրի լիազօր Մեդվեդեվ։ Խորհրդակցութիւնը մտադիր է հիմնական վերաքննութեան ենթարկել ֆիլօքսերայի դէմ մաքառելու գործը։ Պետերբուրգից պահանջել են այդ գործի մասին բոլոր նիւթերը և ի միջի այլոց ագրօնում Մօրեվի բրոշիւրը, որը պարունակում է իր մէջ բոլորովին նոր հայեացքներ այն խմբերի գործունէութեան վերաբերմամբ, որ ամեն տարի ուղարկվում են խաղող բուսնող տեղերը հետազօտելու։

—

Կիրակի, ապրիլի 6-ին, Թիֆլիսի «Կրուժոկում» Վ. Լունկեվիչ կը կարդայ իր վերջին դասախօսութիւնը, մոգական պատկերներով, երեխաների և աչակերտների համար։ Դասախօսութեան նիւթը լինելու է «Բնութեան հրաշալի և ահեղ երևոյթների» մասին։ Բերում ենք այդ դասախօսութեան մանրամասն պրօգրամը։ Մշտական ցրտի և սառուցի երկիրները։ Հիւսիսափայլ։ Սառցալեռները։ Անջրդի անապատ։ Օազիս։ Թափառը անապատում։ Փոթորիկը ծովի վրա։ Թափառը ծովի վրա։ Ֆատամորգանա։ Ծովի լոյս տալը։ Սուրբ Էլմայի կրակները։ Թափառող լոյսեր։ Ստալակտիտային այրեր։ Ստորերկրեայ որոտներ և լճեր։ Կօրալլեան կղզիները։ Դասախօսութեան սկիզբը ցերեկվայ 12½ ժամին է։

—

Մեզ գրում են Շուշուց, որ մտադրութիւն կայ այնտեղ հանգանակութիւն բանալ յօգուտ գաղթականների։

—

«Лучъ» լրագիրը հաղորդում է, որ չուտով Պետերբուրգում պէտք է գումարվի զրոշների համաժողով։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են մարտի 31-ից. «Անցեալ գիշեր մեր քաղաքում պատահեց մի սոսկալի չարագործութիւն։ Պառաւ Մարիամ Ճգնաւորեանցի տունը մտնում են չարագործները և պառաւին միայնակ տանը գտնելով՝ խեղդում են, կողոպտում գլխի զարդերն ու տան իրեղէնները և անհետանում։ Աւազակները անյայտ են։ Մի քանի օր առաջ կողոպտեցին և Սօնա Մէլիք-Շահնազարեանի տունը և տարան բաւական իրեր։ Շնորհիւ մեր անշնորհ ոստիկանութեան, մինչև այժմ էլ աւազակները չեն բռնվել»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Գարուն է. ձիւնը վերացել է դաշտերից, բայց գաղթականները դեռ մաչում են վեհարանի ու Բարեգործական ընկերութեան տան չէմքերը, թէև թէ մէկը և թէ միւսը զգալի կերպով նուազեցրել են իրանց օգնութեան չափը։ Մեր գաւառապետը ստացել է բաւական շոր և մտադիր է բաժանել Բարեգործական ընկերութեան ճիւղի ցուցակի համաձայն, որովհետև պոլիցիայի հաւաքած տեղեկութիւնը համապատասխան էր վարչութեան ցուցակին»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են մարտի 29-ից. «Այսօր, Լուսաւորչի տօնին, Այվազեան եպիսկոպոսը եկեղեցում քարոզ տուեց։ Ժողովրդի բազմութիւնը, որ եկել էր մի յայտնի հարուստի թաղման պատճառով, անհամբեր սպասում էր։ Եւ ինչ. ամբողջ կէս ժամ եպիսկոպոսը ոգևորված պատմեց Տրդատի Հայաստան գալու և Գրիգորի վիրապը զցելու մասին մի կատարեալ հեքիաթ։ Այդ խօսքերը մեր ծխական դպրոցների երրորդ բաժանմունքի աշակերտներին են սովորեցնում։ «Գրիգորիէ» խօսքը ուղիղ 49 անգամ այնպէս ոգևորված ասում էր, որ կարծես թէ հրեշտակների ձեռքերի վրա երկինք էր բարձրանում։ Վերջը առանձին ինքնահաւանութեամբ յայտնեց, որ «Եկն ի վիրապէն» տօնին յատկապէս Շամախուց պիտի գայ իր հոգեմայլ քարոզով սիրելի զաւակների սրտերը պայծառացնելու։ Երջանիկ էք այսուհետև, բաղուցիներ։»

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են, մարտի 26-ից. «Երէկ երեկոյեան մեր երկսեռ դպրոցների դահլիճում կայացաւ հոգաբարձուների ընտրութեան երրորդ և վերջին ժողովը։ Առաջին և երկրորդ ժողովներին հասարակութիւնը չէր բարեհաճել ներկայ գտնվելու. իսկ վերջին անգամ հաղիւ 40 մարդ էր եկել։ Պ. Գ. Թորոսեանց գրեթէ միաձայն ընտրվեց հոգաբարձու, բայց ցաւալի է որ իսկոյն էլ հրաժարվեց։ Այնուհետև ձայների մեծամասնութեամբ ընտրվեցան պ.պ. Խ. Թոփալեանց և Ֆերդինանդ Աղաճանեանց։ Արդեօք, սրանք պիտի կարողանան հասարակութեան յոյսերը արդարացնել՝ համերաշխութիւն պահպանելով գրեթէ երեք կուսակցութեան (քահանայական) բաժանված մի բուռը հասարակութեան մէջ։ Տեսնենք։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԶՄԱՑԻԼ ԲԷՄԻԼ ԲԷՅԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Times» լրագրի մէջ հրատարակուեց Տրիպոլիսի նախկին ընդհանուր նահանգապետ Իզմայիլ Բէմիլ-բէյի զեկուցման լիակատար բնագիրը, որ նա ներկայացրել է սուլթանին փետրվարի վերջերին։ Այդ զեկուցմունքը նշանաւոր է մանաւանդ նրա համար, որ նրա հեղինակը ոչ թէ եւրիտասարդ Թիւրքերի կուսակցութեան պատկանող մարդ է, ոչ թէ յեղափոխական ընկերութիւններից մէկի անդամ է, այլ Թիւրք պաշտօնեայ է, որը յայտնի է իր հաւատարմութեամբ սուլթանին։ Ահա նրա բովանդակութիւնը։

Սկզբում Բէմիլ-բէյ յիշեցնում է սուլթանին, թէ ինքն յաճախ մատնացոյց էր անում նրան այն խառնակութիւնների վրա, որոնք բուն են դրել օսմանեան կայսրութեան մէջ և որոնց պատճառով Եւրոպան սպառնում է միջամտել և խորհուրդ էր տալիս նրան անհրաժեշտ բէֆորմները մտցնել, նախ քան այդ բանը ձեռք կառնին եւրոպական պետութիւնները։ «Այդ ցուցմունքները,—գրում է Բէմիլ բէյ,—տհաճութեամբ ընդունեցին ձեր մեծութեան կողմից։ Վերջ ի վերջոյ այդ ցուցմունքների վրա նայեցիք որպէս դաւաճանութեան վրա, և ոչ թէ հայեցիք որպէս դաւանարիւ ծառայի խորհրդի վրա... Այժմ ձեր մեծութիւնը անկասկած համոզուեցիք, որ եթէ անհրաժեշտ բէֆորմները մտցնուին, ձեր կայսրութեան անկախութեան վտանգ չէր սպառնայ և ձեր նահանգները կտորուած և կողոպուտի տեսարան չէին ներկայացնի։» Ապա այն համոզմունքը յայտնելով, որ Աբդուլ-Համիդ անկեղծ կերպով ցանկանում է իր հպատակների բարօրութիւնը, Բէմիլ-բէյ շարունակում է. «Սակայն կասկած չը կայ, որ ժողովուրդը երջանկացնելու բոլոր ջանքերի հետևանքը չափազանց տխուր էր։ Եթէ հաւաքենք ձեր մեծութեան թագաւորութեան 20 տարիների ընթացքում հրատարակված բոլոր իրադէները, օրէնքները և կարգադրութիւնները, կը տեսնենք, որ նրանք չոչափում են վարչութեան բոլոր ճիւղերը, բայց, դժբաղդաբար, այդ բոլոր իրադէները այնպիսի պայմաններով և նախապզուշութիւններով էին շրջապատված, և դրանց յաղուածների խմբագրութիւնը այնպիսի անընդունակ մարդկանց էր յանձնված, որ նրանք մեռած տառ մնացին։»

(Կը շարունակվի)

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԵՏԷ

—

—Հռոմից հաղորդում են, որ աւստրիական ծովային զինուորները կալանաւորել են կանկյում վեց իտալացի նաւաստիներ, որոնք փորձ էին անում անցնել ապստամբների բանակը։ Այդ դէպքը ուշադրութիւն է գրաւել։

—«Berliner Tageblatt» լրագրի Հռոմի թղթակիցը հեռագրում է մարտի 27 ից. «Իտալական ծովապետը, Կանէվարո, յայտնել է, որ Յունաստանի պաշարումը միայն այն ժամանակ կը հանի իր նպատակին, եթէ աջողվի փակել ամբողջ յունական նաւատորմը Սալամինեան ծոցում։ Հէնց որ կը յայտարարվի յունաց նաւահանգիստների պաշարումը, Կանէվարո ծովապետը իսկոյն կը թողնի իր պաշտօնը, որպէս զի գործողութիւնների ղեկավարութիւնը անցնի մի ուրիշ պետութեան ծովապետին։ Ապա ծովապետը յայտնել է, որ եթէ պատերազմի դէպքում, յաղթութիւնը Թիւրքերի կողմը մնայ, մեծ պետութիւնները թոյլ չեն տայ նրանց Աթէնք գնալ։ Եթէ յոյները յաղթեն, այն ժամանակ Կրետէն կը միացնվի Յունաստանի հետ, որպէս զի պատերազմը չը տարածվի ամբողջ Բալկանեան թերակղզու վրա։»

—«Politische Correspondenz» լրագիրը հաղորդում է, որ դիտաւորութիւն կայ նշանակել իշխան Ֆրանց-Յովսէփ Բատենբերգին Կրետէի ընդհանուր նահանգապետ։

—Յունաց Գէորգ թագաւորը յայտնել է Աթէնքի ռուսաց դեսպանատան առաջին քարտուղար Բախմէտիէվին, թէ Եւրոպայում տարածված լուրերը Յունաստանի նահանջման մասին՝ միանգամայն սխալ են։ «Ոչ մի յետնահանջում Յունաստանի համար հնարաւոր չէ, վճռական կերպով յայտնել է թագաւորը։ Մօտ է վճռական բոպէն։ Երկրի այժմեան վիճակը երկար տեւել չէ կարող։ Եթէ յունական կառավարութիւնը այժմ թողնի իր մաղդրութիւնը, դրանով խնդիրը չի վերջանայ։ Ցոյն զօրքը և ժողովուրդը իրանք զէնքի կը դիմեն։ Ցոյների հայրենասիրական ոգին իր գագաթնակէտին է հասել և այլ ևս ոչ մի հնար չը կայ կանգնեցնել նրանց։»

—«Temps» լրագիրը հեռաւոր տեղեկութիւններ է հաղորդում Կրետէի այժմեան վիճակի մասին։ «Ապստամբները և յոյները բաղմաթիւ են և իրանց ձեռքումն ունեն, անպայման, ամբողջ կղզին։ Նրանք չատ խիստ կերպով պաշարել են Կանէան, Կանդիան, Բէտիմնոն և Սիտիան։ Միայն եւրոպական նաւատորմների թնդանոթներին են թակայ տեղերը անվտանգ են։ Մօտակայ սարերում բերդերը շրջապատված են ապստամբներով և Թիւրքերը չեն կարողանում այնտեղ պաշար հասցնել։ Փոքր ընդհարումներ չարունակ տեղի են ունենում։ Եւրոպական զօրքերը այնքան քիչ են, որ նրանք չեն կարող ներգործական դեր խաղալ Կրետէի խաղաղացման գործում։ Թիւրքերը կանէյում 3.000 հոգի են։ Նրանք արդէն 16 ամիս է ռռճիկ չեն ստանում։»

—«Daily Telegraph» լրագրին հեռագրում են Վիէննայից, որ Ֆրանսիան առաջարկել է, Ռուսաստանի համաձայնութեամբ, յետաձգել Աթէնքի ծոցի պաշարումը։ Միաժամանակ կառաջարկվի Դէորդ թագաւորին կրետական հարցը լուծելու նոր ծրագիր, որի համաձայն Յունաստանը պարտաւոր է, Եւրոպայի ցանկութիւնը կատարելու համար, յետ կանչել Կրետէից իր զօրքերը, իսկ մեծ պետութիւնները պէտք է անմիջապէս կազմեն պլէբիսցիտ, որը կորոշի կղզու ապագայ վիճակը։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԷՆՏԻ ՆԻՍՏԸ

—

Ապրիլի 8 ին (ն. տ.) իտալական պարլամէնտում քննվեց Խմբրիանի պատգամաւորի հարցապնդումը կրետական գործերի մասին։

«Իտալիան, ասաց հռետորը, դաւաճանեց իր պարտաւորութեան և դրա մէջ մեղաւոր են երեքպետեան դաշնակցութիւնը և Գերմանիան, որի հրամանի ներքոյ է գտնվում նա։» Ապա Խմբրիանի յարձակվեց Հանօտոյի և նրա օգնականների (աղմուկ և ծիծաղ) քաղաքականութեան վրա։ Այժմ կատարված իրողութիւններից յետոյ, Ֆրանսիան այլ ևս իրաւունք չունի մտածել Եգիպտոսի, իսկ Իտալիան՝ Տրիէնտը և Տրիէստը վերադարձնելու մասին։ Խմբրիանի յայտարարում է, որ յունաց թագաւորն է Եւրոպայում արժանի այդ անուան (բուռն ծափահարութիւններ արիբոնների վրա), իսկ Յունաստանը մի իդէալական եւրոպական պետութիւն է (ձայներ՝ ափսոս միայն, որ նա իր պարտքերը չէ վճարում ծիծաղ)։ Հռետորը ափսոսում է, որ Լիսաբոնի պատերազմից յետոյ, իտալական նաւատորմը հռչակվեց միայն կրետացիներին ամրակոծելով (աղմուկ)։

Նախագահը հրաւիրում է ճառախօսին աւելի չափաւոր լեզու գործածել։

Խմբրիանի. «Իտալիան ինքն իրան անպատուեց (սարսափելի բողոքող ձայներ. Բուդինի բարձրանում է իր տեղից և խիստ կերպով պախարակում է հռետորին, որին նախագահը նորից կարգի է հրաւիրում)։ Ինչու համար (զիմելով մինիստրներին) մենք ուղարկել ենք Կրետէ 30 նաւեր, իսկ Գերմանիան՝ միայն մէկը։ Նրա համար, որ մենք Գերմանիայի վասսալն ենք, նրա համար, որ մեր նաւերը գերմանական են, (աղաղակներ, ծիծաղ, առարկութիւններ)։ Աւելի լաւ է մեկուսացած մնանք, քան մարդասպաններ և դաւաճաններ լինենք, ինչպէս (ցոյց տալով մինիստրներին) այս պարոնները։ (Նոր սարսափելի աղմուկ. Բուդինի ցատկում է և շարժում է ձեռները. նախագահը սպառնում է ճառախօսին խօսքից զրկել)։

Խմբրիանի. Եթէ մենք չենք կարող խուսափել պատերազմից, պէտք է նաւատորմն ուղարկել դէպի Տրիէստ, և ոչ թէ Կրետէ։

ՅՈՒՆԱՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՕԹԱՆԱՄՆԱՄԵԱԿԸ

—

Ցոյն ազգի անկախութեան ոգեսիրութեան սիրով Աթէնքը չքեղ կերպով զարդարվեց։ Թագաւորական ընտանիքը այցելեց տաճարը, ուր ներկայ էր մաղթանքին։ Ճանապարհի երկարութեամբ կանգնած ժողովրդի խուռն բազմութիւնը չերմ կերպով ողջունեց նրան։ Զօրքերը կանգնած էին երկկարդ։ Մաղթանքին ներկայ էին նոյնպէս դիպլոմատիական մարմնի անդամները։ Թագաւորական ընտանիքի և բարձրաստիճան պաշտօնեաների կառքերի մէջ ամբոխը գտնում էր թղթի կտորներ, որոնց մէջ գրված էր «կեցցէ պատերազմը»։ Ցաճարի շուրջը կանգնած ամբոխը աղաղակում էր. «կեցցէ թագաւորը», «կեցցէ պատերազմը», «կեցցէ Կրետէն»։ Մաղթանքից յետոյ ցոյց անողների խումբը դրօշակներով դիմեց դէպի համալսարանը, ուր արտասանվեցին քաղաքական ճառեր։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մարտի 19-ին

Պարսկաստանի քաղաքական դրութիւնը չատ խառն է։ Բազմաթիւ մինիստրներ պաշտօնանկ են եղած և նորերը կանչված այդ պաշտօնների գլուխ անցնելուն։ Վերջերս պարսից կառավարութիւնը Թէհրան հրաւիրեց հայազգի Միրզա Մելքոն խանին, որ երբեմն Լօնդօնի պարսից դեսպանի պաշտօնն էր վարում և որը հանգուցեալ Շահի հրամանով պաշտօնանկ էր եղած։

Թէհրանից յայտնված է հետևեալ լուրը. մօտ օրերս, երբ Շահը վերադառնում էր իր պալատը հայազգի իշխան Դաղեանի տնից, ուր այցելութեան էր գնացել, յանկարծ գնդակ են արձակում նրա վրա։ Բայց չարագործը իր նպատակին չէ հասնում և իսկոյն ձերբակալվում է, ժողովուրդը, կարծելով թէ Շահն արդէն գնդակահարված է, փակեց բոլոր խանութները և պատսպարվեց ուր կարող էր։ Անչուշտ քաղաքում մեծ իրարանցում պիտի լինէր, եթէ նորին վեհափառութիւնը, չը նայելով իր անձնական տկարութեանը, կառքով քաղաքի մեծ հրապարակը դուրս չը գար, ժողովրդի յուզումը դադրեցնելու համար։ Ասում են, որ Շահի դէմ մահվան փորձ անողը, կալանաւորելու ժամանակ, բացականչում է. «Շահ, ես հաստատ գիտեմ, որ դու ինձ պիտի սպանես, բայց ուզում եմ, որ դու ևս հաստատ իմանաս, թէ մի տարուց աւելի չես կարող ապրել։»

Այդ խօսքերը պարզում են մի գաղտնիք, որին պարսից կառավարութիւնը մօտաւորապէս մի տարի է, որ հետամուտ է։ Այդ խօսքերը ցոյց են տալիս, որ Նասրէդդին Շահին գնդակահարողը և ներկայ սճրագործը պատկանում են մի որոշ կուսակցութեան, որի նպատակն է վերջ դնել ներկայ թագաւորական «դաջար» ցեղին։

Ատրպատականի այժմեան նահանգապետ Ամիր-Նիզամը չուտով այստեղ կը ժամանի Քիւրդիստանի կողմից, որտեղ նա գնացել է երկու քուրդ ցեղերի միմեանց դէմ ունեցած կռուին վերջ դնելու։

Քաղաքը սուգի մէջ է։ Բոլոր չուկաները փակված են մեծ կրօնապետի (մուչթիդ) մահվան առիթով։

Սլաք

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

—

Շնորհաւորեցէք, ընթերցող, ես վճռեցի թատերագրող դառնալ, և յոյս ունեմ, որ ոչ բժիշկ Տէր-Գրիգորեանցից վատ վոդեվիլներ կը գրեմ, և ոչ էլ Սունդուկեանից վատ կոմեդիաներ։ Այդ ենթադրվող աջողութիւնը, ես պէտք է խոստովանեմ, վերագրում եմ ոչ թէ իմ տաղանդին, այլ այն շնորհալի նիւթին, որը ես վերցրել եմ իմ վոդեվիլի համար։ Այդ նիւթը առնված է մեր այժմեան գրական կեանքից, գործողներն էլ կենդանի մարդիկ են (պակաւիլ չը կարծէք)։ Դուք անչուշտ տրամադիր էք կարծել, որ իմ թատրոնական գրուածքները մեծ աջողութիւն կունենան, որովհետև երբ հասարակութիւնը գլխապտոյտ թատրոն է վազում, անոյշ մարդկանց կեանքից վերցրած պատկերներ տեսնելու, որքան աւելի մեծ կատաղութեամբ նա կը դիմի դէպի թատրոնական սրահը՝ տեսնելու հայոց հասարակական գրական գործիչների անհամեմատ աւելի չահեկան տիպերը, նրանց հոգին, նրանց իսկական դէմքը...

Իմ առաջին վոդեվիլի վերնագիրն է «Մէկ թռեմ, մէկ պաչեմ»։ Գործող անձինքներն են՝ խմբագիրներ, հրապարակախօսներ, հանգամանաղներ (որ թարգմանի բանաստեղծ), վիպագրողներ, մի խօսքով մարդիկ, որոնք ամենից չատ են թողթի և թանաք ապառում... Ներեցէք ինձ, որ ես իմ գործող անձանց մասին առ այժմ մանրամասն տեղեկութիւններ չեմ հաղորդի (եթէ որ և է բեպորտեար ինտերվիւեր գայ ինձ մօտ «Մուրճի» խմբագրութիւնից, դուցէ տամ մի քանի տեղեկութիւններ)։ Բայց մի բան հէնց այսօր կը պարզեմ, այն թէ ինչու իմ վոդեվիլի անունը դնում եմ «Մէկ թռեմ, մէկ պաչեմ»։ Այդ վերնագիրն ես ընտրեցի Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովից յետոյ, մանաւանդ այն օրից, երբ հայոց մի թերթի մէջ (խեղճ հայոց թերթեր՝ բոլորն էլ անանուն են դառնում) դուրս եկան մի քանի անձինք, և սկսեցին համբուրել երէկվայ թռած տեղերը, որպէս զի ըստ վաղեմի սովորութեան, մի քանի օրից՝ նորից թռքեն այն տեղերի վրա, որ երէկ համբուրում էին...

Եւ որքան կենդանի, թարմ ու անհերքելի են այդ փաստերը։ Ահա օրինակ։ Հայոց ամենամեծ սօփեստը, ինքն Աւետիք Արասխանեանց, որ «պատով» ստանձնեց «Ցարազի» ժամանակաւոր խմբագրութիւնը, յայտարարելով, որ «Մուրճի» և «Ցարազի» մէջ ոչինչ հակասութիւն չէ եղել, բացի մի քանի թիւրիմացութիւններից, դուրս է գալիս որ, ինչպէս այդ ցոյց տուեց պ. Լէօ, տարիների ընթացքում նամակներով պրոպագանդա էր անում գլորել գաւառներում «Ցարազը», իբրև մի այնպիսի օրգան, որ ոչինչ կապ չունի գրականութեան հետ, հաւատացնելով, որ Տիգրան Նազարեան և Աբգար Յովհաննիսեան մի և նոյն բարի պատուղներն են... Եւ այսօր մշտադալար երեխան, Տիգրան Նազարեան, թոյլ է տալիս որ իրան համբուրեն այն շրթունքները, որոնց արանքից երէկ մի անագին ուրիշ թռուք չպրտվեց իր երեսին... Ահա և մի կատ օրինակ։ Մի պարոն, որ կրում է Շիրվանզադէ պսեվդոնիմը, և այժմ խեղճ Նազարեանցի «Ցարազի» մէջ իր լուացքն է լուանում, և փառաբանում «Ցարազի» և նրա խմբագրի գործունէութիւնը (փըշտ), մի քանի ժամանակ առաջ, երբ գրկված Աբգար Յովհաննիսեանի հետ ներբողներ էր կարդում հայոց ամենամեծ թատրգչին, էլ ինչ լուտանք ասէք չը թափեց Տիգրան Նազարեանի վրա։ Կարծեմ ամենամեղմ բառը, որ նա գրոչմեց Նազարեանի ճակատին, —դա ատֆէրիստ բառն էր... Իսկ այժմ, երէկ միմեանց վրա թքող թշնամիները, միմեանց գրկած համբուրում են այդ թքով չաղախված վայրերը։ Որպիսի նուրբ ճաշակ... Որպիսի անկեղծ բարեկամութիւն։ Էլի մի ուրիշ օրինակ։ Թէհրանի «Շաւիղ» թերթի էջերում ինչ կեղտ և հայհոյանք ասէք չը թափվեց «Ցարազի» և նրա անբաղդ հրատարակչի գլխին։ Եւ այդ անողը «Շաւիղի» այն ժամանակվայ խմբագրողը՝ Վ. Փափազեանցն էր, որ նոյնպէս այժմ ձեռք ձեռքի տուած երէկվայ «հրէշի» հետ, այսօր նրա թերթի մէջ, նրա հետ միասին կռիւ է մղում յանուն հասարակական շահերի... Էլի օրինակ էք ուզում. համեցէք։ Մի քանի ժամանակ առաջ, Աւետիք Արասխանեանց, նոտարական ընկերի հետ կռիւ մղելով (անիծեալ նոտարական ընկեր, որ այնքան դժբաղդութիւնների պատճառ եղաւ), յայտարարեց, որ Շիրվանզադէն այն մարդկանցից է, որ փողի համար ընդունակ է ծախել իր գրիչը (որպիսի ծանր վիրաւորանք), բայց այժմ, նոյնպէս համբուրելով երէկվայ թքած տեղը, պաշտօնական դիմումներ անգամ ուրանալով, հաւատացնում է, որ Շիրվանզադէն զրպարտված է Հրատարակչական ընկերութեան վարչութիւնից... Վերջապէս էլի փաստ։ Մի երիտասարդ, Յովհաննէս Թումանեանց, բայց թողնենք նրան, —«զի ոչ գիտէ զինչ գործէ»։ Նա ինքն իրան թաղեց հէնց իր յօդուածով, որի մէջ, նա, խուժանի այդ հարազատ զաւակը, արիստոկրատիական ծիրանի հագած, արշաւանք է սկսում խուժանի դէմ։ Սաղ է գալի պոլսական առածը՝ ով դարը, ով բարը...

Թողնենք դրանց արժանի ընկերներին՝ ապատանած ուրիշ թերթերում։ Այդ էլ բաւական է։

Այժմ, հասկացէք, ընթերցող, թէ ինչու ես իմ վոդեվիլի անունը գրեցի «Մէկ թռեմ, մէկ պաչեմ» և անչուշտ ոչ միայն հասկացաք, այլ պէտք է խոստովանէք, որ անունը չատ յարմար է։ Եւ եթէ անուան չափ աջող լինի և բովանդակութիւնը, կարող էք ինձ շնորհաւորել, որ յիրաւի, ես մի հասարակ գրողից՝ չուտով կը դառնամ անմահ թատերագրող, ընդունակ անմահացնելու հայոց գրողների բարոյական չը տեսնված առաքինութիւնները...

ԳՐՈՂ.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ. 3 ապրիլի։ «Հագիգաթ» լրագիրը յայտնում է, որ մարտի 18-ի յարձակումը գործել են յոյն անկանոն զօրքերը։

Կ. ՊՕԼԻՍ. 3 ապրիլի։ Թիւրքաց զինուորական և քաղաքացիական շրջանները չատ զբաղած են, որ հրաման տրվեց էդէմ-փաշային այլ ևս առաջ չը շարժել զօրքը։ Այդ շրջանները բարկացած են նրանով, որ յոյների գրգռող ընթացքին չը պատասխանեցին թիւրքերը կտրական յարձակումով։ Արտաքին գործերի մինիստրի յայտարարութիւնից երևում է, որ երէկ Իլդիզ-Քեօսկում տեղի ունեցած մինիստրների խորհրդում ոչինչ որոշում չը կայացաւ։ Ուրիշ աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, մինիստրների խորհուրդը պատերազմը յայտարարելու կողմնակից էր։

Առաջին թիւրքաց նաւատորմը դուրս եկաւ Դարդանելից դէպի Տրիկալա։

Մակեդոնական աւազակախմբերը վերադարձան յունական ցամաքը։ Ապստամբները ներկայումս

գտնվում են սահմանի վրա կուզուիլիանի մօտ։

Կ. ՊՕԼԻՍ, 3 ապրիլի։ Հաստատվում է, որ մինիստրների երէկվայ խորհրդի մէջ որոշվել է սպասել զօրքերի առաջ շարժվելուն յոյն-թիւրքական սահմանի վրա, մինչև նոր, անկասկած յարձակումն կը լինի յունաց կանոնաւոր զօրքերի կողմից։

Բ. Դուռը յայտնում է, որ վերջին կռիւների դաշտի վրա յունաց կանոնաւոր զօրքերի զինուորների բազմաթիւ դիակներ են գտնված։

ԲԵՐԼԻՆ, 3 ապրիլի։ Ապրիլի 2-ին հասան 300 իտալացի ուսանողներ։ Ուսանողներին կայարանում դիմաւորեցին Բերլինի ուսանողութեան տնտեսութիւնների մատնաժողովը, իտալական կոլոնիայի ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն։ Կայարան եկաւ և դեսպան կոմս Լանց։

Կ. ՊՕԼԻՍ, 3 ապրիլի։ Պատրիարքարանի կառավարիչը ընտրված է տիեզերական պատրիարք։

ՅԷՏԻՆԻԷ, 3 ապրիլի։ Բէրանէում մեծ թիւով հաւաքված ալբանցիները պայտնանկ արին գայմագամին և իրանց ձեռքն առան քաղաքացիական և զինուորական իշխանութիւնը։ Բէրանէում անիշխանութիւն է տիրում։

ՎԻԵՆՆԱ, 4 ապրիլի։ Կ. Պոլսում մինիստրական ճգնաժամի մասին տարածված լուրերը ծագեցին մինիստրների խորհրդի մէջ եղած տարաձայնութեան պատճառով, որի մեծամասնութիւնը Յունաստանին պատերազմ յայտնելու կողմն էր, իսկ սուլթանը համաձայնութիւն չէր տալիս այդ բանին։ Հետևեալ ելքն են գտել. պատերազմ յայտնել, երբ կը կրկնվի յոյների կողմից յարձակումն, որին մատակցելիս կը լինեն կանոնաւոր զօրքերը։

ԼՕՆԴՕՆ, 4 ապրիլի։ «Times» լրագրին հեռագրում են, որ երկուշաբթի յունական աւազակախմբերը կրկին խուժեցին սահմանից՝ անցնելով Գրեվենայի մօտ, թիւով 1000 մարդ, և յարձակվեցին թիւրքերի վրա։ Կռիւից յետոյ, յոյները յետ մղվեցին՝ 50 մարդ կորցնելով։

Կ. ՊՕԼԻՍ, 4 ապրիլի։ Փոքրաթիւ յոյն աւազակախմբերին աջողվեց ամրանալ Պիդում։ Նահանգապետները և հիւպատոսները իրանց տեղեկագիրների մէջ մատնացոյց են անում ալբանցիների զինաւորման վտանգի վրա։

Տիեզերական պատրիարքի ընտրութիւնից յետոյ, հակառակ կուսակցութիւնը աղմուկ հանեց, որին վերջ տուեց ոստիկանութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. դուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ երբ.	12 „ 25 „ ցերբ.
Թիֆլ. դուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաղու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.
Բաղուից դուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցերբ.	11 ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ երբ.
Թիֆլ. դուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ երբ.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հենդ հոդու համար		
Թիֆլիսից դուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է	Մնում է	Պասանուր
Վլադիկավկազ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ
Վերադարձ հոդու համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից դուրս է գալ	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 50 ր.
Վլադիկավկազ հասնում է	12 „ —ցերեկ.	8 երեկ „ „

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 *ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։*

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 *ժ. աչքի, ներքին և նեարդային հ.*

կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 *ժ. կանանց և երեխայոց հ.*

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 *ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ* $1\frac{1}{2}$—2 *ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։*

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 *ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 *ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։*

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ *ժ. ներքին և երեխայոց հ.*

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 *ժ. երեք. հինգ. և շաբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 *ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։*

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—$6\frac{1}{2}$—$7\frac{1}{2}$ *ժ.*

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մկզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. *չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։*

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿՈՒՄ

Կիրակի, մարտի 6-ին, Վ. Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ կը կարդայ իր վերջին դասախօսութիւնը երեխաների և աշակերտների համար՝

«ԲՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԼԻ ԵՒ ԱՀԵՂ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրուին մոգական պատկերներ։

Տոմակները 50 կոպէկից մինչև 20 կ., ծախվում են Մեսանիկովի մագազինում, Դվորցովայա փողոցի վրա և պ. Խիդեկելի մագազինում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, իսկ դասախօսութեան օրը „Թիֆլիսի Կրուժոկի“ շինութեան մէջ։

Սկիզբը ցերեկվայ $12\frac{1}{2}$ *ժամին*

1—1

Կիրակի, ապրիլի 6-ին, ԶՐԿԻՆԵՆՑ եկեղեցում նորընծայ ԳՐԻԳՈՐԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑը կը մատուցանի իր անդրանիկ պատարագը։ Սկիզբը $10\frac{1}{2}$ *ժամին։* 1—1

Ամսիս 6-ին, ԾԱՂԿԱՁԱՐԴԻ կիրակի օրը, հանգուցեալ ԳԷՈՐԳ քահանայ Գալստեանի փոխանորդ նորընծայ Գալուստ քահանայ Աբուլեանը կը մատուցանէ անդրանիկ պատարագ Վանքի աւագ եկեղեցում. ուստի խոնարհաբար խնդրում եմ բարեպաշտ ծխականներին չնորհ բերել եկեղեցի։ Ս. պատարագը կը սկսվի $10\frac{1}{2}$ *ժամին։*

1—1 *Գ. ա. ք. Խարազեան*

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ գանազան հիւանդութիւնների բժշկելով, ՄԱՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ $5\frac{1}{2}$—$6\frac{1}{2}$ *ժամը երեկոյեան։ Աւչալեան փողոց, № 19։*

29—148 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкальное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ,
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(№ 35) 20—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է իր անդամներին, որ կանոնադրութեան § 71 ով տրված եռամսեայ արտօնութիւնը՝ պարբերական վճարներ մտցնելու համար, վերջացաւ այս ապրիլի 1-ին և որ մինչև ապրիլի 16 ը բոլոր ապառիկները չը մտցնելու դէպքում, անճիշդ վճարողների կալուածքները, կանոնադրութեան § 72-ի հիման վրա, հրապարակական աճուրդի կը դրվեն 1—1

ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՕՂՊԱՏԵԱՅ ԳԵՐԱՆՆԵՐ

Պօրտլանդիայի ցեմենտ

ԿՐԱԿԻՆ ԴԻՄԱՑՈՂ ԱՂԻՒՍ

և շինութեան ուրիշ մթերքներ վաճառվում են

ԻՆՖԻՆԵՐՆԵՐ ԵՄԲԱԼՕՎԻԵՒԱԼԻԽԱՆՕՎԻ

Գործարանի պահեստներում, ԹԻՖԼԻՍՈՒՄ, կայարանի մօտ։ (№ 38) 2—5

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, ապրիլ ամսի 16/28-ին ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՈՒՇ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ամիսին, ՆԱԲԷՐԷԺՆԱՅԱ։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ա. Դիլգարեանին, Կոլիբեանկինակայա հրապարակ։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշինրոզերին։ (№ 16) 4—20

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

մեծադիր և չատ աջող պատկերը ՁԵՆԱՊԱԿՈՒ ՎՐԱ (на фарфорѣ) պատրաստված Լօնդօնում («Ադրիբ-Ցարագի» հրատարակութիւն) բացառապէս վաճառվում է Յովհաննէս Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում։

Պատկերն ունի յենարան և պէտք չունի շրջանակի, չատ չքեղ զարդ է ամեն հայի տան համար։

ԳԻՆԸ 3 ՐՈՒԲԼԻ։ «Մշակի» կովկասեան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, И. С. Теръ-Саркисьянъ, магазинъ, Дворцовая улица. (№ 31) 9—10

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառվում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները։

83	ՀԱՄԼԷՏ Շէքսպիրի թարգ. անգ. Յով. խան Մաէէհեանի.	— 75
84	ԲՆՆԱԿԱՆ ՊԱՏՄ. ՀԱՅՈՑ, մասն Ա. (Ա. Մ. Գարագաշեանի.)	— 1
85	Նոյն, Մասն Բ. (Ա. Մ. Գարագաշեանի.)	— 1
86	Նոյն, Մասն Գ. (Ա. Մ. Գարագաշեանի.)	— 1
87	Նոյն, Մասն Դ. (Ա. Մ. Գարագաշեանի.)	— 1
88	ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, բ. տպ. Ս. Պալասանեանի.	1 50
89	ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Յ. Ճանիկեանի.	2 —
90	ՈՒՐԲԻՆՕԵՅԻ ՄԱՆՈՒԿԸ, Ուղղի զրույցներից.	— 10
91	ԿՕՇԿԱԿԱՐ ԵՐԱԺԻՇՏ, Տիտչեվի.	— 5
92	ԽՆՁՈՐԵՆԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, Ուղղի զրույց.	— 10
93	ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ, հեղ. տիկին Մօնգոմերի	— 60
94	ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅ., գ. տպ. Յ. Պարոնեանի.	— 40
95	ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ, Ա. Քիշմիշեանի.	— 80
96	ՀԱՁԱՐԻՑ ՄԷԿը, Ն. Մամիկոնեանի.	— 60
97	ԻՆՁՊԷՍ ԿՈՒՁԷՔ, Շէքսպիրի, թարգ. Յ. խան Մաէէհեանի.	— 50
98	ԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ, բժ. Վ. Արծրունի.	— 50
99	ԿԵՂԵՔԻՉ, վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի.	— 10
100	ԳՈՌՈՋ ԱՐՄԱՒԵՆԻ, (Վ. Գարշինի։)	—
101	ԳՈՌՈՋ ԱԳԴԷՆ, (Վ. Գարշինի։)	— 5
102	ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԳՈՐՏԸ, (Վ. Գարշինի։)	— 5
103	ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՈ, պատկերներով.	1 25
104	ԳԵՏՆԱՔՈՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ, թարգ.	— 10
105	ՎՐԷԺ, Գիւի դը-Մօպասանի, թ. Լ. Մ. Ա.	— 5
106	ԱԿԱՄԱՑ ՄԱՐԴԱՍՊԱՆ, թարգմ. Տ. Յովհաննիսեանի.	— 15
107	ՄՈՒՖԼՈՒ, Ուղղի, թարգմ. Յ. Օհանեանի.	— 10
108	ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ, Թ. Լ. Մ.-Ադամեանի.	— 7
109	ՆԱՊԱՍՏԱԿ, Սլիվիցկու.	— 7
110	ԾԵՐՈՒՆԻ ՄԱՐԿՕՆ, Ի. Եակշիչի, թ. Մէղենիկեանի.	— 10

6—10

ԲԱՑՈՒԱԾ է 1897 թ. ի

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ“

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Հանդէս Ամսօրեայ» ուսումնական թերթը կը մտնի իր գոյութեան 11-դ շրջանը և կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը՝ նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ «Հանդէս Ամսօրեային» պահելով հանդերձ նոյն ծաւալն՝ որ է երկու մեծադիր թերթ, պիտի բովանդակէ այն ամեն հետաքրքրական, հմտալից յօդուածներն, որ կը հային հայ գրականութեան։

Տարեկան գինը Ռուսաստանում 4 ռուբլի

Խմբագրութեան հասցէն՝ A la Rédaction de la Revue «Hantess» VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4. 4—4

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Апрѣля 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 2.